Ազգ
Azg
10 ՄԱՐՏ 2017 ՈՒՐԲԱԹ 9(5457)
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ISSN: 1829-1651
9 771829 165003 17009

## Դոնալդ Տուսկը վերընտրվեց ԵՄ նախագահ՝ ի հեճուկս հայրենի Լեհաստանի կառավարության



Երեկ առավոտից ԵՄ երկրների ղեկավարների կարծիքն էին ճշտում Բրյուսելում լրագրողները՝ կո՞ղմ եք Տուսկի վերընտրմանը: Բոլորը միակարծիք էին, որ Եվրոխորհրդի նախագահի պաշտոնում հենց 59-ամյա լեհ գործիչը վերընտրվի: «Սկզբունքի հարց է, մենք դեմ ենք», Լեհաստանի կառավարության կարծիքն է, որ միակը եղավ՝ դասելով 28 քվեից 27 կողմ ձայների հարաբերակցությունից: Տուսկը եվրոպական այս կառույցի նախագահ դարձավ՝մինչեւ 2019- ի տարեվերջ պաշտոնավարման ժամկետով: Լեհաստանը սպառնում էր վիժեցնել ընտրությունը: Լեհաստանի նախկին լիբերալ վարչապետ Դոնալդ Տուսկի դեմ է այսօրվա իշխող ուժը՝ Յարոսլավ Կաչինսկու ղեկավարած ազգային պահպանողական «Իրավունք եւ ճշմարտություն» կուսակցությունը:

Ան. Հ.,Գերմանիա

ՕՐԵՐԻ ՀԵՏ

## Վերարտադրվում են բոլորը, իսկ նպատա՞կը...

Իշխանության վերարտադրություն. այս արտահայտությունը սովորաբար օգտագործվում է որպես մեղադրանք ուղղված Սերժ Սարգսյանին ու նրա գլխավորած կուսակցությանը: Մեղադրողները հիմնականում նրանք են, կուսակցություններ ու դաշինքներ, ովքեր այժմ մեծ ոգեւորությամբ մտել են ընտրապայքարի մեջ... փաստորեն վերարտադրվելու համար: Նայեք ցուցակին խորհրդարանական աթոռները զբաղեցնելու հավակնություն ունեցող կուսակցությունների ու դաշինքների. բացի կոմկուսից, նրանք բոլորն էլ առնվազն մեկ շրջան, նկատի ունեմ ընթացիկ շրջանը, արդեն զբաղեցնում են այդ աթոռները եւ անկախ իրենց սիրուն-սիրուն կարգախոսներից ու մեծամեծ խոստումներից, փաստորեն փորձում են ամեն գնով վերարտադրվել: Նույնիսկ Կոմկուսը, որին բացառություն որպես հիշեցի, իրականում ինքն էլ է փորձում անել նույնը, բայց այն տարբերությամբ, որ ինքը ձգտում է ոչ թե վերարտադրվել, այլ՝ վերարտադրել, հասկանալի է՝ համայնավարական «գերազանց» (իրենց կարգախոսից է) վարչակարգը:

Նախընտրական քարոզարշավն ընթանում է բուռն թափով, ինքնագովերգման եւ ինքնափառաբանման արշավը՝ նույնպես: Բազմացել է երկրի ու ժողովրդի ճակատագրով մտահոգվածների թիվը: Հիմա բոլորը, իբր, գիտեն ինչ անել, ինչպես անել, որպեսզի երկիրը զարգանա, տնտեսությունը բարգավաճի, պետությունն ավելի պաշտպանված լինի, արտագաղթը կանգ առնի, ժողովրդավարությունը տիրապետի բոլոր մակարդակներում եւլն, եւլն: Զանց չի առնվում նաեւ Արցախի հարցը, որի կարգավորումը սակայն, բոլորը տեսնում են գրեթե նույն կերպ, բացառությամբ դաշինքի վերածված Կոնգրեսից, որի առաջարկած լուծումը սակայն նոր չէ, այլ 20 տարվա հնության եւ միտված է, պարզապես, Առաջին նախագահի «անսխալականությունը» փաստելուն:

Սակայն նրանցից ոչ մեկը չի կարողանում անկեղծ խոսել ժողովրդի հետ, խոստովանել, բացատրել նրան, թե ո՞ր հարցերում է ինքը ձախողել, որո՞նք են եղել պատճառները եւ, եթե հավելյալ ձայներ ու մանդատներ ստանա, ինչպես է սրբագրել-լուծելու դրանք:

Քաղաքական անպատասխանատվությունը Հայաստանում ոչ մի ժամանակ այսքան ցայտուն չի եղել, ընտրողների առաջ հաշվետու չլինելը երբեք այսքան չի շեշտվել: Գիտեմ, գիտեմ, շատերը հակաճառելու են ինձ– այսքան օրինագիծ ենք ներկայացրել, այսպիսի նախաձեռնություններով ենք հանդես եկել, եւլն: Սակայն մարդկանց կյանքի պայմանները, երկրի ընդհանուր վիճակը մնացել է նույնը, իսկ դուք պատասխանատու չեք. չորս տարի ի՞նչ էիք անում խորհրդարանում, ՀՀԿ-ի համասարած տիրապետության պայմաններում ոչինչ չէի՞ք կարող անել, ապա ինչո՞ւ շարունակեցիք մնալ նրա մամլիչի տակ, ինչո՞ւ միանգամայն չլքեցիք ձեր աթոռները, պատրաստ չէի՞ք ինքնազոհողության...

Այդ պարագայում, ստեղծված ու շարունակվող վիճակի համար ինքներդ եք պատասխանատու, առնվազն՝ իշխող կուսակցության հետ միասին եք կրում պատասխանատվությունը: Հետեւաբար ձեր ներկա ընթացքը, վերընտրվելու շատ բուռն ցանկությունը ուրիշ բան չեն, եթե ոչ՝ ամեն գնով վերարտադրվել եւ, ո՜վ հեգնանք, միաժամանակ վերարտադրել այն իշխանությանը, որը տիրելով եւ տիրապետելով հանդերձ սահմանադրական երեք իշխանություններին՝ նույնպես ցանկություն չունի պատասխանատվություն կրելու եւ, հետեւաբար ու բնականաբար, ցանկանում է վերարտադրվել, ձեզ հետ, ձեր օգնությամբ նաեւ, որպեսզի միասին շարունակեք խաղալ նույն խաղը:

Ուստի, հարգարժան կուսակցություններ ու դաշինքներ, ոչ ոքի մի՛ մեղադրեք ու մի՛ բողոքեք: Տեսեք, ժողովուրդն էլ չի բողոքում, նույնիսկ՝ ձեր ընդունած Ընտրական խայտառակ օրենսդրությունից: Մարդիկ գիտեն, որ այս ամբողջը գործարք է, իսկ գործարքի հիմքը՝ փոխադարձ շահը: Ձայն ես ուզում՝ ուտեմն վճարիր: Աթոռ ես ուզում՝ վարձը տուր:

Վճարեք ուրեմն, եւ առաստրեն:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

## Ո՞վ կթրամփի Հայաստանում

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ



Զարմանալի բան՝ ասում են տնտեսությունը , ժողովուրդը վատ վիճակում են, բայց ընտրարշավի սկսվելու պահից ի վեր ամենուր ոտքդ ու աչքդ դիպչում են փողոցում թափված կամ վիրտուալ տարածքից ծիկրակող անիմաստ շքեղությունների՝ գովազդի տեսքով, որոնք մեր առօրյա պակասորդաշատ պարագայում թվում են ջուրը լցվող անօգուտ միլիոններ: Որ այդքան վատ ենք ապրում ու փող չկա անգամ արագորեն ռեսուրս ներդնելու ու մաքրելու ողջ մայրաքաղաքը խցանած ու ձյան տակից դուրս եկած պեմզան՝ ի՞նչ իմաստ կա շռայլորեն թափվող ու միմյանց հետ անիմաստության աստիճանով մրցակցող գովազդների վրա այդքան փող ծախսել: Մանավանդ՝ այս քսան տարի այնքաա՜ն եք բոլորդ, պատգամավորության հարգելի ու անհարգելի թեկնածուներ, ամեն տեղ ու ամեն ինչում ձեր հնարավորությունները, բառապաշարը, կարողություններն ու ունակությունները ցույց տվել, որ ժողովրդի համար ոչ մի անհայտ բան ձեր մասին չի մնացել:

Mail.ru-ում ժպտում են պիջակը մեջքին գցած վարչապետն ու անկախության առաջին ժամանակներում անհնար, իսկ հիմա շատ էլ հնարավոր զույգը՝ Տեր-Պետրոսյանն ու Դեմիրճյանը, իսկ mail.ru-ի գովազդը բավական թանկ արժե: Երեւանի բոլոր երթեւեկելի փողոցներից ժպտում են, կարելի է անգամ ասել՝ քմծիծաղում են (եթե այսքան տարի ոչինչ չանելուց հետո էլի առաջադրվում են) տարբեր թանկ ֆիրմաների կոստյումները ցուցադրող, սափրված-ֆոտոշոփված տղամարդիկ՝ պլպլան թշերով ու դեմքի՝ նրանց դեպքում հնարավորինս խելոք արտահայտությամբ, որը սարսափելի ջանքեր գործադրելով եւ իր բախտն անիծելով՝ մի կերպ կարողացել է ստանալ լուսանկարիչը: Վահանակներն այն մեծության են, որ թույլ չեն տա մեզ, լինի երթուղայինի թե տաքսու միջից, դուրս նայել ու չտեսնել, թե ովքեր են մեր կյանքը «կազմակերպող-ախպոր տղերքը»:

Դե հա, հաճելի բաներ էլ մեկ -մեկ կարելի է տեսնել, հեռուստացույցով, կամ եթե ընտրողը չալարի ու հանդիպման գնա՝ ասենք գեղեցկուհի Արփինեն ընդունում է , որ սխալներ եղել են, բայց ով չի աշխատում՝ չի սխալվում, Արփինեի կուսակցությունն էլ միայն իրատեսական խոստումներ է տալիս:

⇨6

## Թուրքիան ու Գերմանիան՝ ոնց որ մաս ու եղունգ

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Գերմանիա

Գերմանիա-Թուրքիա լարվածությունը նոր բռնկում արձանագրեց: Նախորդ շաբաթ Ստամբուլում ձերբակալվեց գերմանական «Դի վելթ» պարբերականի թուրք լրագրող Դենիս Յուչելը, որ թուրքական իշխանությունների կողմից կասկածվում է «ահաբեկչական կազմակերպությանը հարելու, տվյալների ապօրեն օգտագործման, ահաբեկչություն քարոզելու» մեջ: Կանցլեր Մերկելը պահանջել է ազատել լրագրողին: Լարվածության ֆոնին Գերմանիայում բազմիցս չեղարկվել են թուրք պաշտոնյաների՝ սահմանադրական հանրաքվեին ի նպաստ քարոզչություն ծավալելու ցանկությունը: Նախ մերժվեց Թուրքիայի արդարադատության նախարարի ելույթը տեղի թուրքական համայնքի առջեւ, ապա էկոնոմիկայի, այնուհետ՝ արտգործնախարարի հանդիպումները: Էրդողանի՝ ԳԴՀ հասցեին հնչեցրած կոշտ, վիրավորական արտահայտությունները հատեցին Գերմանիայի համար կարմիր գիծը՝ «Ես կարծում էի, թե նացիզմն ավարտվել է Գերմանիայում, պարզվում է՝ այն դեռ շարունակվում է»: ԳԴՀ քաղաքական վերնախավը կտրուկ եղավ՝ որեւէ մեկն իրավունք չունի ժամանակակից Գերմանիան համեմատել նացիստական ռայխի հետ: «Մեր միջեւ կարող են խոր տարաձայնություններ լինել, սակայն երկխոսությանն ու բանակցություններին այլընտրանք չկա», ամփոփ կոչ արեց արտգործնախարար Գաբրիելը, որ շաբաթասկզբին ցանկություն հայտնեց քայլ առ քայլ վերադառնալ նորմալ հարաբերությունների հուն: Արտգործնախարար Չավուշօղլուն Համբուրգում մարտի 7- ին ելույթ ունեցավ, հաջորդ առավոտ Բեռլինում հանդիպեց գերմանացի իր պաշտոնակցին: Գաբրիելն էլ նրան հիշեցրեց ավելի վաղ կանցլեր Մերկելին Թուրքիայի վարչապետի տված խոստումը՝ գերմանացի հյուրպատոսներին կարտոնվի տեսակցել Յուչելի հետ: Լրատվությանը չհետեւած ընթերցողի համար՝ կարճ ու ամփոփ՝ այսքանը: Իսկ մանրամասների գույներն ու ծալքերն այնքան ծանոթ են թվում ինձ՝ 20 տարի այս երկրում բնակվողիս, որ քաղաքագիտական կրթություն չունենալով էլ լավ կռահում եմ, որքան էլ մեզ խորթ է մինուս-պլյուսի այսպիսի ձգողականությունը:

Գերմանացի քաղաքական գործիչների մի մասը համոզված է, որ Թուրքիայի հետ հարաբերությունների հետագա լարվածության աճը նրան առիթ կտա մերձենալ Ռուսաստանին: Դա՞ ենք ուզում, հարցնում են գրեթե հռետորաբար:

Պատմությունը Գերմանիայի եւ Ռուսաստանի արքունիքների արյունը խառնել է իրար, իսկ պետություններին ու մանավանդ ժողովուրդներին միշտ բաժանել է, Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, թվում է, թե թշնամանք բառը կուչ եկած սպասում է՝ Ռուսաստանի մասին ակնարկ լինի, գերմանացիների անխնա քննադատության զսպանակին յուղ տա:

⇨8




Խավիարային դիվանագիտությունը արդարացնո՞ւմ է իրեն

էջ 4



Տիգրան Չուխաջյանի կորած ձեռագրերի հայտնաբերումը Փարիզում

էջ Ա



Ղրիմն Ուկրաինային վերադարձնելու պահանջը ամերիկյան ...

էջ 9

AZG NEW SHABAT 1.QXD 08/03/2017 21:53 Page 2



ՅԱԿՈԲ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

## Բացայայտումներ ու անմիտ հարցումներ

Ազատ խօսքի ջատագով Ամերիկայի մէջ տեղեկատուական ցանցերը ատենը անգամ մը դուրս գալով իրենց երկիրն ու քաղաքականութիւնը թմբկահարող կարգախօսներէն, քողարկուած կամ մշուշապատ իրադարձութիւններու աղօտութեան վարագոյրը բանալով՝ իրականութիւնները հանրութեան կը յանձնեն:

Այսպէս, վերջերս New York Times ազդեցիկ թերթին մէջ լոյս տեսած երկարապատում գրութեամբ մը Scott Anderson բաւական համարձակ եւ յստակ պարզաբանումներ կ՚ընէ արաբական երկիրներու «գարնանային» ցնցումներուն մասին եւ մանրամասն նկարագրութիւններու կողքին՝ թիւերով կը խօսի:

Այսպէս. 13 տարի առաջ ԱՄՆ-ի Իրաք ներխուժման հետեւանքով ցարդ 1.455.590 իրաքցի սպաննուած է, ինչպէս նաեւ՝ 4801 ամերիկացի զինուոր եւ 3487 զինուոր դաշնակից զօրամիաւորումներէն:

Արաբական երկիրներու մէջ սանձազերծուած պատերազմները ցարդ արժած են $1.705.856.000.000 (մէկ թրիլիոն, եօթհարիւրհինգ միլիառ, ութհարիւրյիսունվեց միլիոն ԱՄՆ տոլար)...

Իրաք ներխուժման, ապա արաբական երկիրներու մէջ պատերազմներ բռնկեցնելուն որպէս հետեւանք, մէջտեղ եկած են «Իսլամական պետութիւն» կազմակերպութիւնն ու անոր նման ահաբեկչական այլ կազմակերպութիւններ: (Անշուշտ այդ ծայրայեղական կազմակերպութիւնները իրենք իրենց մէջտեղ չեն եկած...)

Յանուն Իսլամի պաշտպանութեան եւ իսլամական կրօնի քարոզչութեան սիրոյն մղուած կռիւներուն զոհ գացածներուն 70%ը... իսլամներ են: (Պատկերացուցէք, իսլամը իսլամ կը սպաննէ յանուն Իսլամին...)

Կը մտածեմ, այս եւ նման արձանագրուած եւ համաշխարհայնացած տուեալները ի՞նչ անդրադարձ կ՚ունենան երկիրներու ղեկավարութեանց վրայ, ոճրագործին եւ զոհին վրայ, ընթերցողներուն վրայ:

«Արաբական գարունի» առաջին «ծաղիկները»՝ Թունուզն ու Եգիպտոսը, համեմատաբար շուտ խաղաղեցան, առաջինը այդ թէժ տարածաշրջանին մէջ մեծ նշանակութիւն չունէր, իսկ Եգիպտոս երկու իշխանափոխութեանց պարագային ալ շարունակեց աւանդական տուրք տալու ձեւը առ որ անկ է: Լիպիան դեռ տակնուվրայ է, Եմէնը՝ կրակներու մէջ, Սուրիան... անոր վիճակը նկարագրելու համար յարմար բառեր կը պակսին: Ցնցումի ենթարկուելու նոր թեկնածուներ կը նշմարուին հորիզոնին վրայ. վերի թիւերը ենթակայ են աւելնալու եւ բազմապատկուելու...

Այս բոլորէն տեղակ ըլլալէ ետք, հիմա, միամիտօրէն հարց մը տամ, թէ այսքան մարդ յանուն ինչի՞ կը սպաննուի, այսքան երկիրներ յանուն ինչի՞ կը քանդուին, կամ այսքան հսկայ գումարներ ուրկէ՞ կը ծախսուին...

Դեռ աւելի միամիտ, նոյնիսկ անմիտ բաներ չըսէք յանկարծ, թէ այս ծովածաւալ դրամով քանի անօթի երկիր կը կշտանար, կամ՝ քանի հազար համալսարան ու դպրոց կը կառուցուէր, կամ քանի հազար գիւղ ու քաղաք կը լուսաւորուէր...

Այսպիսի անմեղ հարցումները կամ առաջարկները ոմանց կողմէ ձեզ մեղաւոր կը դարձնէին եւ ձեզ խենթի տեղ կը դնէին: Ի՞նչ է, լուսնի վրա՞յ կ՚ապրիք, թէ՞ չէք գիտեր որ այս ամէնը «վերէն» հրահանգուած է եւ դուք ընդդիմանալու իրաւունք չունիք, աւելի ճիշդ՝ անոր դէմ կենալու կարողութիւն չունիք: Իսկ այդ «վերէն» ըսուածը մերթ «Աստուծոյ ընտրեալն» է, կ՚ըսեն, մերթ Լուսաւորեալքն (Illuminati) են կ՚ըսեն, մերթ ալ այլմոլորակայիններն են, կ՚ըսեն: Այսինքն, բոլորն ալ Աստուծոյ «դեսպաններն» են, եւ ուր Աստուած կը գործէ, հոն մեզի պէս մարդիկ գործ չունին:

# Լիստի նորահայտ գործի համաշխարհային պրեմիերան կկատարի սոպրանո Անուշ Հովհաննիսյանը

ՀԱԿՈԲ ԱՍԱՏՐՅԱՆ

Պրահա

BBC (ԲիԲիՍի) Քարդիֆի «Աշխարհի երգիչ» հեղինակավոր մրցույթի եզրափակիչ փուլ է անցել մեր հայրենակցուհի, լոնդոնաբնակ ճանաչված սոպրանո Անուշ Հովհաննիսյանը: Անցյալ տարվա ընթացքում պրոֆեսիոնալ ժյուրին աշխարհի 6 քաղաքներում 4 փուլով լսումների արդյունքում ընտրել է եզրափակիչ փուլի 20 մասնակցի: Մրցույթին յուրաքանչյուր երկրից կարող էր մասնակցել 3 հոգի: Հայաստանը ներկայացրել է միայն Անուշ Հովհաննիսյանը:

«Աշխարհի երգիչ»ը, որ անցկացվում է երկու տարին մեկ անգամ, Ուելսի տարվա ամենամեծ մշակութային իրադարձությունն է: Այս մրցույթը համարվում է դասական երգի միջազգային ամենահեղինակավոր ստուգատեսը՝ դասական երգարվեստի յուրատեսակ օլիմպիադա:

Հուլիսին կայանալիք եզրափակիչում մրցույթն անցկացվելու է երկու ուղղությամբ՝ կամերային երաժշտության եւ օպերային արիաների: Ֆինալիստներն իրենք են որոշում իրենց նախընտրած ուղղությունը: Մեր հայրենակցուհին հանդես կգա վերը նշված երկու ուղղություններով: Եզրափակիչը տեղի կունենա հունիս 15-ին եւ 18-ին՝ օպերային երգարվեստի գծով, իսկ հունիսի 11-ին եւ 16-ին՝ կամերային երաժշտության:

Եզրափակիչ փուլի ելույթները հեռարձակվելու են ԲիԲիՍիի հեռուստատեսության եւ ռադիոյի ուղիղ եթերով, ինչպես նաեւ համացանցով:


Լուսանկարը՝ Ռոբերտ Քոլոյանի

Անուշ Հովհաննիսյանը օպերային մրցույթում հանդես կգա համաշխարհային պրեմիերայով: Նա առաջին անգամ կկատարի 170 տարի առաջ գրված հունգարացի մեծ կոմպոզիտոր Ֆրանց Լիստի նոր «Սարդանապալ» օպերայից հույն ստրկուհի Միռայի դերերգը: Օպերան ասորական Սարդանապալ թագավորի եւ նրա հույն ստրկուհու սիրո պատմության մասին է: Այս օպերան Լիստն անավարտ է թողել եւ միայն վերջերս է հայտնաբերվել արխիվում: Օպերայի ձայնագրությունները արդեն կատարվել են Լոնդոնում եւ շուտով կթողարկվեն ոչ միայն ձայներիզ եւ վավերագրական ֆիլմ, այլեւ կհրատարակվի օպերայի մասին ուսումնասիրություն:

Այսօր ֆիլմից մի քանի հատվածներ թողարկվել են նորահայտ օպերայի կայքէջում՝ www.sardanapalo.org, որն արդեն մեծ արձագանք է գտել միջազգային մամուլում, այդ թվում՝ «Նյու Յորք Թայմս», «Թելեգրաֆ» եւ այլ ազդեցիկ թերթերում:

Այսօր ԲիԲիՍի-ում տեղի է ունեցել նաեւ մամլո ասուլիս, որին մասնակցել եւ լրագրողների հարցերին են պատասխանել օպերան բացահայտած եւ ուսումնասիրած դոկտոր Թրիփեթը եւ սոպրանո Անուշ Հովհաննիսյանը:

«Իմ երաժշտական կարիերայում սա բացառիկ երեւույթ եւ մեծ պատիվ է, որ նման հռչակավոր կոմպոզիտորի ստեղծագործության առաջին կատարումը վստահվում է ինձ: Այդ անավարտ օպերայից հատվածը երգելու եմ առաջին անգամ եւ ներկայացնելու եմ Հայաստանը»,- «ՕՐԵՐ»-ի հետ զրույցում ասաց Անուշ Հովհաննիսյանը: Նշենք նաեւ, որ մրցույթի հաղթողը ստանալու է հաղթական գավաթը, ֆինանսական պարգեւ եւ, իհարկե, միջազգային ճանաչում եւ առանձնահատուկ կարգավիճակ:

Նախկինում այս մրցույթին հայազգի երգիչներից մասնակցել է գերմանական Էրֆուրտի օպերային թատրոնի մեներգիչ բաս Վազգեն Ղազարյանը, որ մյուս տարի դեբյուտային ելույթներով հանդես կգա Նյու Յորքի հեղինակավոր Մետրոպոլիտեն օպերային թատրոնում:

Հիշեցնենք նաեւ, որ 2016 հոկտեմբերի 17-ին Անուշը ճանաչվեց հեղինակավոր «Ստելա Մարիս» մրցույթի հաղթող, միաժամանակ արժանանալով 4 գլխավոր մրցանակի, իսկ դեկտեմբերի 4-ին Մարսելում Բելլինիի անվան բելկանտոյի մրցույթում արժանացավ շվեյցարական Գշտատի Ամանորյա փառատոնի հատուկ մրցանակին, ըստ որի նա 2018 թվին մեներգով հանդես կգա Շվեյցարիայում:

Իսկ մի քանի շաբաթ առաջ, 2017-ի փետրվարին, Լոնդոնի Քովենթ Գարդենում Անուշ Հովհաննիսյանը մեներգով հանդես եկավ World Works ժամանակակից բալետում:

# Նորածնային երեխաների խնամքի համար Ստեփանակերտի բուժհաստատությունները նոր սարքավորումներ ստացան


***Դանիել եւ Իզաբել Յուսեֆյանները***




«Հայաստան» համահայկական հիմնադրամի բարերար, Ռամկավար Ազատական կուսակցության Գերագույն խորհրդի անդամ, արգենտինահայ Դանիել Յուսեֆյանը Արցախի «Մոր եւ մանկան առողջության պահպանման կենտրոն» եւ «Արեւիկ» մանկական բուժմիավորում ՓԲԸ-ներին նվիրաբերել է 4 նոր սարքավորումներ: Սա առաջին անգամը չէ, որ Դանիել Յուսեֆյանը եւ Յուսեֆյան ողջ ընտանիքը կարեւոր նվիրատվություններ են անում Մայր հայրենիքին, հատկապես կենտրոնանալով այն ծրագրերի վրա, որոնք միտված են ազգաբնակչության վերարտադրողական կարողությունների աճմանը:

«Արցախպրես»-ի թղթակցի հետ զրույցում «Արեւիկ» մանկական բուժմիավորման տնօրեն **Մեսրոպ Մարգարյանն** ասել է, որ հիվանդանոցը համալրվել է գերմանական «Դրեգեր» ֆիրմայի 2 գերժամանակակից կուվեզներով (հատուկ ինկուբատոր), որտեղ պահվում են անհաս եւ ցածր քաշով ծնված նորածին երեխաների:

«Այս սարքավորումներն ապահովում են անհաս երեխաների խնամքի բոլոր պայմանները. դրանք ապահովված են համապատասխան խոնավությամբ, ջերմաստիճանով, թթվածնով, որոնց օգնությամբ նորածինների կենսագործունեությունը նորմալ է ընթանում: Սարքավորումն ունի նաեւ մոնիտոր, որն ապահովում է շնչառական եւ սիրտ-անոթային համակարգի գործունեության բոլոր պարամետրերը: Երեխան տեւականորեն գտնվում է վերահսկողության տակ: Տարվա կտրվածքով, կուվեզներում պահվում է 15-20 երեխա»,-ասել է Մ. Մարգարյանը եւ նշել, որ մինչ այսօր բուժմիավորումում կար ընդամենը 2 սարքավորում:

«Մոր եւ մանկան առողջության պահպանման կենտրոն»-ի տնօրեն **Վադիմ Օսիպովն** էլ լրացրել է, որ նորածինների ինտենսիվ թերապիայի բաժանմունքը համարվում է կենտրոնի կարեւոր օղակներից մեկը, եւ այն գտնվում է ԱՀ առողջապահության նախարարության ուշադրության կենտրոնում:

«Վերջին տարիների ընթացքում պարբերաբար կենտրոնի նորածինների ինտենսիվ թերապիայի բաժանմունքը հագեցվել է ժամանակակից սարքավորումներով: Այս սարքավորումները հնարավորություն են տալիս ԱՀ-ում ծնված անհաս նորածինների լիարժեք բուժում, հսկողություն եւ խնամք իրականացնել: Սարքավորումները կնպաստեն էլ ավելի բարձրացնել բուժման մակարդակը»,- ասել է Վ. Օսիպովը եւ նշել, որ «Մոր եւ մանկան առողջության պահպանման կենտրոն»-ը մինչ այսօր ուներ ընդամենը 1-ը. այն համալրվել է եւս 2-ով:

Վ. Օսիպովի խոսքով՝ եղած սարքավորումների մաշվածության պատճառով իրենք չէին կարողանում դրանք լիարժեք օգտագործել:

Artsakhpress.am

AZG NEW SHABAT 1.QXD 08/03/2017 21:53 Page 3



ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# «Թվային աշխարհի միջնադարն» ու Հայաստանը ըստ Եվգենի Կասպերսկու

## Համակարգչային հանցագործների սարսափը Երեւանում էր

*Անցյալ տարի «Կասպերսկու լաբորատորիայի» գլխավոր գործադիր տնօրեն եւ նախագահ Եվգենի Կասպերսկին գտնվում էր Հայաստանում, ստանալու համար տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) ոլորտում համաշխարհային ներդրման համար ՀՀ Նախագահի մրցանակը: Այդ օրը, լրագրողների հետ հանդիպման ժամանակ, նա խոստովանեց, որ սիրում է լինել Հայաստանում (նախորդ անգամ եղել էր 2011-ին) եւ խոստացավ մեր երկիր այցելել 2-3 տարին մեկ: Համակարգչային հանցագործների ոխերիմ թշնամին գերակատարեց իր խոստումը, անցած շաբաթվա ընթացքում այցելելով Հայաստան:*

Այս անգամ Երեւանում գտնվելու ժամանակ **Եվգենի Կասպերսկին** հանդիպեց լրագրողների հետ, այսպես կոչված` մամուլի ընթրիքի ժամանակ ներկայացնելով «Թվային աշխարհի սպառնալիքները» թեմայով «Կասպերսկի Լաբորատորիայի» հետազոտությունը, որը տվյալներ էր պարունակում այն սպառնալիքների վերաբերյալ, որոնց բախվում են աշխարհի ու նաեւ Հայաստանի օգտատերերը: Բացի Եվգենի Կասպերսկուց, հետազոտության մանրամասները ներկայացրեցին նաեւ «Կասպերսկի Լաբորատորիայի» սպառնալիքների վերլուծության եւ ուսումնասիրության գլոբալ կենտրոնի փոխտնօրեն **Սերգեյ Նովիկովը** եւ Հայաստանում ու Վրաստանում «Կասպերսկի Լաբորատորիայի» ներկայացուցիչ **Արմեն Կարապետյանը**:

Պարզվում է, որ 2016 թվականին Հայաստանում յուրաքանչյուր երրորդ օգտատերը համացանցում բախվել է կիբեռսպառնալիքների` վնասաբեր ծրագրերի, ցանցահենային գրոհների, դրամաշորթության (մասնավորապես` կեղծ, ֆիշինգային էջերի), սպամի եւ շատ այլ բաների: **Այս ցուցանիշով Հայաստանը բավականին բարձր` 14-րդ տեղն է զբաղեցնում աշխարհում:**

Բացի այդ, Հայաստանում օգտատերերի 40 տոկոսը ենթարկվել է, այսպես կոչված, տեղային սպառնալիքների` վնասաբեր օբյեկտների, որոնք սարքեր են թափանցում հանովի կրիչների միջոցով (օրինակ` ֆլեշ-հիշողություններ): **Նման սպառնալիքների ենթարկվածության առումով Հայաստանը 55-րդն է աշխարհում: Այս ցուցանիշով նախկին Խորհրդային Միության երկրներից Հայաստանը, ցավոք, վաս դիրքերում է:**

Օգտատերերի եւս 10 տոկոսն ունեցել է շարժական սարքերի սպառնալիքների հետ բախման փորձառություն: Բջջային հեռախոսների նկատմամբ սպառնալիքներն աճել են տարեց-տարի` 2014-ին` 5 մլն, 2015-ին` 17 մլն, 2016-ին` 40 մլն: **Հակառակ սրան, ըստ Սերգեյ Նովիկովի, շատերը համարում են, որ բջջային հեռախոսները ավելի պակաս են ենթակա ռիսկի:**

Հայաստանում անհատական համակարգչի յուրաքանչյուր օգտատերը տարվա ընթացքում միջին հաշվով 13 անգամ հանդիպել է համացանցային սպառնալիքների: Իսկ ահա տեղային վնասաբեր ծրագրերի հետ նա 6 անգամ ավելի հաճախ է գործ ունենում` տարվա ընթացքում միջին հաշվով 83 անգամ:

«Կասպերսկի Լաբորատորիայի» գնահատմամբ, յուրաքանչյուր կիբեռսպառնալիք առաջ է բերում կարեւոր տեղեկատվության, այդ թվում` էլեկտրոնային փոստի եւ սոցիալական ցանցերի հաշվեգրերի մուտքանունների եւ գաղտնաբառերի, բանկային հաշիվներին առնչվող հասանելիության տվյալները, կապի տվյալները, ընտանեկան ֆոտոպահոցի եւ շատ այլ տվյալները կորցնելու ռիսկ: Ավելին, կան վնասաբեր ծրագրեր, որոնք կարող են հափշտակել օգտատերերի փողերը, եւ եթե անգամ դա նրանց չհաջողվի, ապա նրանց վնասաբեր ծրագրերի պատճառով ֆինանսական ծախսերը գործնականում անխուսափելի են: Ըստ հետազոտության արդյունքների, մեկ կիբեռգրոհի արդյունքում օգտատերերի կրած վնասը միջին հաշվարկով կազմում է 134 դոլար: Վնասաբեր ծրագրերով վարակման զոհն այդ գումարը ծախսում է սարքի վերանորոգման, կորցրած տվյալների վերականգնման, պաշտպանական ծրագրային ապահովման տեղադրման եւ այլ ուղեկցող ծախսերի համար:



**Բազմաթիվ հետաքրքրական տվյալներից մեկը ցույց է տալիս, թե որքանով մեծ է կիբեռգրոհների ենթարկվելու հավանականությունը ներկայումս: Եթե 1986-2006 թվականների ամբողջ` շուրջ 30 տարվա ընթացքում, կիբեռհանցագործների կողմից ստեղծվել եւ կիրառվել է մոտ 1 մլն վնասաբեր ծրագիր կամ վարակ, ապա 2016-ի միայն մեկ շաբաթվա ընթացքում այդ թիվը կազմել է 2,2 մլն կամ 330 հազար` յուրաքանչյուր օրը:** Կիբեռսպառնալիքներին բախվելու ռիսկի են ենթարկվում ոչ միայն շարքային օգտատերերը, այլեւ բիզնեսը, արդյունաբերական ձեռնարկությունները, ֆինանսական կազմակերպությունները, պետական կառույցները:

**Այդուհանդերձ, Եվգենի Կասպերսկու բնորոշմամբ, «թվային աշխարհի միջնադարից» դուրս կարող ենք գալ, նախ` զգույշ եւ ուշադիր գործելով, համակարգչային գրագիտության կանոնները սովորելով, ապա նաեւ «Կասպերսկի Լաբորատորիայի» առաջարկած հակավիրուսային եւ սպառնալիքների դեմ պայքարի տարատեսակ միջոցներ կիրառելով համակարգիչներում, բջջային հեռախոսներում եւ այլ թվային սարքերում:** «Մենք օգտատերերին խորհուրդ ենք տալիս զգոն լինել ինչպես համացանց մտնելիս, այնպես էլ համակարգչով ցանցից դուրս աշխատելիս: Այդուհանդերձ, նույնիսկ ամենազգույշ սարքը չի երաշխավորում կիբեռսպառնալիքներից հարյուրտոկոսանոց պաշտպանություն: Հենց այդ պատճառով յուրաքանչյուր սարքի վրա պետք է տեղադրված լինի պրոակտիվ տեխնոլոգիաներով համալիր պաշտպանական լուծում, որն ի զորու կլինի կանխարգելել նույնիսկ անհայտ, չարագործների կողմից դեռեւս չհնարված միջոցներով վարակումը», շեշտեց Հայաստանում եւ Վրաստանում «Կասպերսկի Լաբորատորիա»-ի տարածաշրջանային ներկայացուցիչ Արմեն Կարապետյանը:

«**Ազգ**»-ի հարցն առնչվում էր աշխարհը ցնցած Էդուարդ Սնոուդենի բացահայտումներին այն մասին, թե ինչպես էր ԱՄՆ կողմից համատարած վերահսկողություն իրականացվում միլիոնավոր մարդկանց, այդ թվում պետությունների ղեկավարների նկատմամբ, գաղտնալսվում նրանց խոսակցությունները, ընթերցվում էլեկտրոնային գրագրությունը:

«Ինչպե՞ս կբնորոշեիք Սնոուդենի բացահայտումները եւ հնարավո՞ր է կանխել կամ թույլ չտալ նման ապօրինի վերահսկողություն միլիոնավոր մարդկանց նկատմամբ»: Ի պատասխան մեր այս հարցի, Եվգենի Կասպերսկին ասաց, որ ինտերես հոսքերի հսկողությունը գաղտնիք չէր, բայց անպսասելի էր դրա մեծ ծավալները, ինչը բացահայտեց Սնոուդենը: «Դա հնարավո՞ր էր կանխել» հարցի շարունակությանը արդեն անձնական զրույցի ժամանակ պատասխանեց Սերգեյ Նովիկովը` «շատ բարդ է»: Մասնավոր օգտատերերի դեպքում, ըստ «Կասպերսկի Լաբորատորիայի» պատասխանատուի, դա գործնականում անհնար է, իսկ պետական կարեւոր օբյեկտների, ռազմական նշանակության եւ գաղտնիք պարունակող կառույցների դեպքում, թեեւ 100 տոկոսանոց պաշտպանվածություն չի լինում, բայց հնարավոր է` պաշտպանվածության մի քանի փուլանոց համակարգերի միջոցով:

Ի դեպ, պատասխանելով լրագրողների հարցերին, Եվգենի Կասպերսկին տեղեկացրեց, որ Հայաստանի պետական կառույցների հետ իր ղեկավարած լաբորատորիան համագործակցում է եւ հայտնեց, որ քայլեր են արվում բարձրացնելու Հայաստանի պաշտպանվածությունը ցանցահենային գրոհներից եւ այլ սպառնալիքներից:

# ԵՄ-Հայաստան համաձայնագիր. եվրոպական «արժեհամակարգի» գիշատիչները կարող են գնձալ

## Իսկ մենք ճաշակելու ենք «տոլերանտության» եւ «յուվենալ» արդարադատության «բարիքները»

Ի՞նչ է այն փաստաթուղթը, որ Հայաստանի Հանրապետությունը պատրաստվում է ստորագրել ԵՄ-ի հետ` «համապարփակ եւ ընդլայնված գործընկերություն» անվանմամբ, հասարակական լայն շրջանակների համար դեռեւս անհայտ է: Սակայն փետրվարի վերջին Հայաստանի նախագահի` հերթական եվրոպական այցելության ժամանակ, ԵՄ տարբեր կառույցների պատասխանատուների հետ հանդիպումներում, պարբերաբար շեշտվում էր, որ այդ փաստաթղթի շուրջ բանակցությունները ավարտվել են եւ այն առաջիկայում կստորագրվի:

Հիմնականն այս համաձայնագրում այն է, որ տնտեսական բաղադրիչը կա՛մ չի լինելու, կա՛մ երկրորդական է լինելու` ի տարբերություն նախկին` «խորը եւ համապարփակ» կոչվող պայմանագրի, որը բարեբախտաբար չստորագրվեց: **Եթե այն ստորագրվեր, ապա Հայաստանի Հանրապետությունը կանգնելու էր բոլոր այն լրջագույն խոչընդոտների առջեւ, որոնք այժմ գոյություն ունեն ԵՄ հետ ասոցիացման համաձայնագրեր ստորագրած Ուկրաինայի եւ Մոլդովայի առջեւ:**

Այսինքն, մենք կորցնելու էինք մեր ավանդական շուկան` Ռուսաստանը, չէինք կարողանալու մեր ապրանքները արտահանել այդ երկիր, էներգակիրների ներմուծման համար լրացուցիչ մաքսատուրքեր էինք վճարելու, դրանք ստանալու էինք միջազգային` ավելի թանկ գներով (ինչի մասին հայտնեց նաեւ նախագահ Սերժ Սարգսյանը), հավելյալ դժվարություններ էին առաջանալու Ռուսաստան գնացող եւ վերադարձող մեր աշխատանքային միգրանտների համար եւ այդ ամենի արդյունքում, բնականաբար, տնտեսական անկում էր արձանագրվելու` ավելի վատթար, քան այն, ինչ տեղի ունեցավ Ուկրաինայի եւ Մոլդովայի հետ: Ի դեպ, Մոլդովայի նորընտիր նախագահը, նկատի ունենալով ԵՄ հետ ասոցիացման ցավագին հետեւանքները, արդեն հայտարարել է այդ համաձայնագրից դուրս գալու համար հանրաքվե անցկացնելու ցանկության մասին:

Անշուշտ, մեր գրանտակերները` թե՛ իշխանական, թե՛ ընդդիմադիր թեւերում, առանց որեւէ առարկայական փաստարկների կգովերգեն ԵՄ-ի հետ այս համաձայնագիրը, իսկ որոշ «ազատ» «դեմոկրատներ» էլ այն արդեն դարձրել են իրենց նախընտրական գլխավոր լոզունգը: Սակայն, հարցին օբյեկտիվորեն մոտենալու եւ արդեն համանման համաձայնագրեր կնքած երկրների նախադեպերին ծանոթանալու դեպքում հստակ երեւում է, թե ի՞նչ հետեւանքներ են դրանք ունենում:

Սկզբում վերոնշյալ գրանտակերների միջոցով հզոր քարոզչություն է սկսվում հօգուտ համարյա թե ամենափրկչի աստիճան բարձրացվող այդ համաձայնագրի օգտին: Քարոզչությունն ֆինանսավորում է նույն Եվրոմիությունը: Այնուհետեւ, առանց միջոցների ընտրության, քարոզչական տեխնոլոգիաների օգնությամբ գունավոր կամ անգույն հեղափոխությամբ իշխանության է բերվում ԵՄ հնազանդ եւ դրա համար առատաձեռնորեն վճարվող նույն ուժերը` քաղաքական եւ քաղաքացիական սոուսով խառնված միմյանց: Հետո արդեն սկսվում են նախկին գործընկեր երկրների հետ կապերի խզումն ու ասոցիացված երկրների տնտեսությունների ազատ անկումը: Փոխարենը, միջազգային ֆինանսական կազմակերպությունները, մեծ ուշացումով, ծանր պայմաններ թելադրելով` սոցիալական ծախսեր կրճատել, սուբսիդիաներ չտրամադրել եւ այլն, վարկեր են տրամադրում, որոնք երբեք թույլ չեն տալիս տնտեսության իրական հատվածի` արդյունաբերության եւ գյուղատնտեսության վրա ծախսել: Այդպես երկիրը հայտնվում է թմրամոլի վիճակում` վարկային ասեղի վրա: Այսինքն, տեղի է ունենում այն, որ «ազատությունն» ու «դեմոկրատիան» դառնում են ԵՄ անդամ երկրների կողմից այլ երկրներին կլանելու եւ տնտեսական կցորդ դարձնելու ճանապարհ:

⇨6

AZG NEW SHABAT 1.QXD 08/03/2017 21:53 Page 4



# Խավիարային դիվանագիտությունը արդարացնո՞ւմ է իրեն

**ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ**

*Դետրոյթ, ԱՄՆ*

Թվում է, թե Ադրբեջանի խավիարային դիվանագիտությունը արդարացնում է իրեն քաղաքական որոշ շրջանակներում: Ազերի կառավարությունը միշտ էլ ձգտել է հայի արյուն թափել: Աշխարհն ականատես եղավ, թե ինչպես Ադրբեջանի կառավարությունը ներեց եւ հերոսի աստիճանին բարձրացրեց Ռամիլ Սաֆարովին, ով 2006 թվին սպանեց հայ զինվոր Գուրգեն Մարգարյանին Բուդապեշտում, որտեղ երկուսն էլ մասնակցում էին ՆԱՏՕ-ի զորավարժական ծրագրերին:

1920-ին երեսուն հազար հայեր սպանվեցին սառնասրտորեն ազերի ոստիկանների եւ գազազած ամբոխի կողմից, որին առաջնորդում էր Բեհբութ խան Ջիվանշիրը: Վերջինիս սպանեց Միսակ Թոռլաքյանը Կոստանդնուպոլսում, 1921 թվի հուլիսին:

Մինչ խորհրդային կայսրությունը փլուզվում էր, Ադրբեջանի պաշտոնյաները, օգտվելով ստեղծված քաոսից, հայերի անխնա կոտորածներ կազմակերպեցին Սումգայիթում, Բաքվում, Կիրովաբադում եւ Խանլարում փետրվարի 26-ից 29-ը ընկած ժամանակահատվածում: Խորհրդային զորքերի համաձայնությամբ, Ադրբեջանի իշխանությունները մոլեգին սպանդ կազմակերպեցին Սումգայիթի հայկական թաղամասերում, որն ստացավ «Օղակ օպերացիա» անունը: Հայերն Ադրբեջանում հարուստ խավին էին պատկանում, որովհետեւ կարողացել էին կատարելության հասնել ինչպես կրթության եւ գիտության, այնպես էլ արվեստի, մշակույթի ընդհանրապես եւ արդյունաբերության բնագավառներում: Մի քանի ամիսների ընթացքում 400 հազար հաշվող համայնքը երկրից դուրս արտաքսվեց, իր ետին թողնելով տուն, տեղ, ունեցվածք, եկեղեցիներ եւ հաստատություններ: Այդ բոլորը ենթարկվեցին թալանի:

Ծածկելու համար այս վայրագությունները եւ հակադարձ հրապարակումների առաջքն առնելու նպատակով, Ադրբեջանի կառավարությունը սկսեց շեփորահարել 1992 թվի «Խոջալուի ցեղասպանության» մասին: Ազերի զոհերի թիվը Խոջալուի դեպքերի ժամանակ 100-ից մի փոքր ավելի էր, որը սակայն, քարոզչության սաստկացման հետեւանքով հասավ 600-ի: Դեպքերը քաղաքականացվեցին, եւ Ադրբեջանը ոչ մի առիթ բաց չի թողնում այն օգտագործելու համար ընդդեմ Հայաստանի:

Որոշ երկրներ եւ պետական գործիչներ կուլ են տալիս խայծը եւ հավատում են հորինված պատմությանը: Օրինակ Մ. Նահանգների Ինդիանա նահանգի կառավարիչ՝ Էրիկ Հոլկոմբը, ով հայտարարություն է հրապարակել կոտորածների վերաբերյալ, «որոնք գործադրվել են հայկական ուժերի կողմից փետրվարի 25-26-ին»: Սեուլում (Կորեա) ադրբեջանցիները, Կորեայի Ազգային ժողովի համագործակցությամբ, փետրվարի 14-ին մի խորհրդակցություն են կազմակերպել նշելու համար երկու երկրների միջեւ հարաբերությունների հաստատման հոբելյանն ու Խոջալուի «կոտորածների» հիշատակը:

Իտալիայում սենատոր Ալդո դի Բիաջիոն քննադատել է իր գործընկերոջը՝ սենատոր Մարիա Ռիզոտտիին այն բանի համար, որ նա խորհրդարանում հիշատակել է «Խոջալուի ցեղասպանությունը»:

Ինչո՞ւ են այս մարդիկ ընկնում Ադրբեջանի լարած ծուղակի մեջ: Պատասխանը մեկն է. հանուն փողի:

Այսպես, Միլանում մի դատավոր վերջերս դատի էր տվել Եվրոխորհրդում եվրոպական ժողովրդական կուսակցության նախկին նախագահ Լուկա Վոլոնտեին: Պատճա՞ռը: Երբ Ադրբեջանի խավիարային դիվանագիտությունը լռեցրել էր 2012-ին Եվրոխորհրդի քննադատական բանաձեւը՝ ուղղված Ադրբեջանի հասցեին, պարզվել էր, որ Վոլոնտեի բանկային հաշիվներում գրանցվել էր երկու վճարումներ՝ համապատասխանաբար 220 եւ 180 հազար եվրոյի չափով:

Բաքվի կառավարությունը ոմանց վճարում է լռեցնելու համար, ոմանց էլ՝ Ադրբեջանի օգտին բարձրաձայնելու եւ աշխարհով մեկ հոգուս իրեն քարոզչությամբ զբաղվելու համար:

Թուրքերն իրենց հերթին զորակցություն են ցուցաբերում իրենց ազերի եղբայրներին: Անկարայում Ադրբեջանի դեսպանատունը վերջերս նույնպես նշեց այդ տարելիցը, եւ վարչապետ Բինալի Յըլդըրըմն այդ առթիվ արտասանած ելույթն ավարտեց՝ կոչ անելով «հայկական զորքերին դուրս գալ Ադրբեջանի 20 տոկոսը կազմող տարածքներից»: Իսկ նախագահ Էրդողանն ուշացումով իր ցավակցությունները հայտնեց «Խոջալուի զոհերի» հիշատակի առթիվ:




Խոջալուի միջադեպը ոչ մի առումով չի կարող համեմատվել Բաքվում եւ Սումգայիթում ազերի իշխանությունների իրագործած վայրագությունների հետ: Որոշ զոհեր տեղի ունեցան 1992 թվի փետրվարի 25-26-ին, երբ հայկական զորքերը պաշարել էին Խոջալուն, որտեղ օդանավակայանն է տեղակայված: Ազերի զորքերը, օգտագործելով Խոջալուի որոշ կառույցները, Ստեփանակերտը պահում էին իրենց թիրախի ներքո եւ կաթվածահար էին արել ամբողջ շրջանը, փորձելով խեղդամահ անել հայերին: Քաղաքը պաշարելուց հետո, հայկական զորքերը մարդասիրական միջանցք բաց արեցին, որպեսզի ազերի բնակչությունը կարողանա այդ ճանապարհով դուրս գալ: Նրանց տարհանումը կանգնեցնելու ազերի զորքերի դժկամությունը խոսում էր այն մասին, որ Բաքվի «արքայական պալատում» ինչ-որ բան էր խմորվում: Իրականում դավադրություն էր մշակվում տապալելու նախագահ Այազ Մութալիբովին: Վերջինս, իր հրաժարականից մեկ ամիս անց չեխ լրագրող Դանա Մազալովային («Նիզավիսիմայա գազետա») տված իր հարցազրույցում նշում էր. «Խոջալուից փախած քաղաքացիների վկայությամբ այդ բոլորը կատարվել էր ինձանից ազատվելու նպատակով: Որոշ ուժեր փորձեցին վարկաբեկել ինձ, նախագահին: Չեմ կարծում, որ հայերը, որոնք նման իրադարձություններում չափազանց ձեռնհասորեն եւ ճշգրտորեն են կարողանում գործել, թույլ կտային, որ ֆաշիստական գործողություններ բացահայտող որեւէ փաստ ձեռք բերեին ազերիները: Հայերն իրոք այդ միջանցքը բաց էին թողել, որպեսզի բնակչությունը կարողանա դուրս գալ Խոջալուից»:

Տասը տարի անց, դարձյալ անդրադառնալով Խոջալուի դեպքերին, նա «Նովոյե վրեմյա» հանդեսի լրագրողի հետ զրուցելիս ասել էր. «Խոջալուի բնակչության կոտորածը կազմակերպված էր ինչ-որ մեկի կողմից, Ադրբեջանում պետական հեղաշրջում կատարելու նպատակով»:

Ո՞վ կարող էր լինել այդ «ինչ-որ մեկը»: Իհարկե նա, ով ամենաշատն էր օգտվելու իրավիճակից: Դա Հեյդար Ալիեւն էր, ով թիկունքում սպասում էր, որ երկրում հաստատի ալիեւյան նավթային դինաստիան: «Բիլիք Դունյասի» գործակալությունը հաղորդում էր, որ 1992-ին Հեյդար Ալիեւը, ներկա նախագահ Իլհամ Ալիեւի հայրը, հետեւյալ ցինիկ արտահայտությունն էր արել. «Մենք օգուտ ենք քաղելու արյունահեղությունից: Պետք է միջամտենք դեպքերի ընթացքին»:

Ծայրահեղ զավեշտական է, որ Ալիեւյան կլանը, որ ի վերջո օգտվել էր Խոջալուի իրադարձություններից, ամբողջությամբ շուռ տա պատմությունը եւ մեղադրի հայկական կողմին:

Ադրբեջանն իր ամբողջ ներուժն է օգտագործում հայերի դեմ իր պայքարում քաղաքական դիվիդենտներ ձեռք բերելու համար: Երեւանն, իհարկե, չի կարող համապատասխան խավիարային դիվանագիտություն վարել, բայց երկրի առաջնորդները պարտավոր են գլուխները դուրս հանել ավազների միջից եւ տեսնել իրականությունը: Օլիգարխները, պետական պաշտոնյաները եւ նրանցից կախում ունեցողները առատորեն օգտվում են կառավարական միջոցներից, բայց ոչինչ չեն անում այդ գումարների որոշ մասը ներդնելու երկրի բարգավաճման գործում:

Հայաստանը կարիք ունի ստեղծելու մի բազմալեզու արդյունավետ մեդիա համակարգ, որպեսզի հասանելի լինի ամբողջ աշխարհին եւ կարողանա ներկայացնել պատմության իր տարբերակը, հատկապես թուրքերին եւ ազերիներին իրենց իսկ լեզուներով: Ուղերձը պետք է լինի հարուստ եւ հարկադրող՝ ինչպես հակառակորդինը: Կառավարությունում գործող «ապարատչիկները» վստահեցնում են իրենց գերադասներին, որ սփյուռքահայ թերթերին համապատասխան նյութեր են հայթայթում, կարծես ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը կամ Թուրքիայի նախագահ Էրդողանը այդ խեղճուկրակ համայնքային հրատարակությունների անխոնջ ընթերցողները լինեն:

Փոխանակ դրսում պայքարելու թշնամիների դեմ, կառավարության որոշ պատգամավորներ երկրի ներսում դեղին լրագրության գործակալներին են վարձում վատաբանելու համար իրենց հակառակորդներին, մոռանալով, որ բոլորովին ժամանակը չէ անձնական հաշիվներ մաքրելու, այլ ժամանակն է մահացու վտանգավոր թշնամու դեմ միասնաբար եւ ամբողջ ուժով պայքարելու:

Սփյուռքահայերի արածն էլ Նյու Յորքում, Վաշինգտոնում, Լոս Անջելեսում կամ աշխարհի զանազան մայրաքաղաքներում հավաքներ անցկացնելն է առիթից առիթ:

Հասկանալի է, որ Հայաստանի ղեկավարության համար կան անհասանելի եզրեր, որ հնարավորությունները սահմանափակ են եւ նրանք չեն կարող մրցել Ադրբեջանի հետ գումարներ հատկացնելու առումով, բայց հաստատ կարելի է ասել, որ նրանք կարող են ֆինանսական միջոցները օգտագործել առավել շրջահայաց եւ արդյունավետ ձեւով: Պրագմատիզմը Ադրբեջանի մենաշնորհը չէ:

**Թարգմ. ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԻ**
**The Armenian Mirror-Spectator**

# Անրի Կյունին պատվավոր նախագահ Չոպանյան ինստիտուտի





Փետրվարին կայացած հանդիպման ժամանակ, Չոպանյան ինստիտուտի (Փարիզ) վարչական խորհուրդը պատվավոր նախագահի բարձր կոչում է շնորհել Հայաստանում Ֆրանսիայի նախկին դեսպան Անրի Կյունիին: «Յան» ակումբում կայացած պաշտոնական արարողությանը, ըստ «Արմինյն Միրոր Սփեքթեյթր» շաբաթաթերթի, ներկա են գտնվել Ֆրանսիայում Հայաստանի դեսպան Վիգեն Չիթեչյանը, ՅՈՒՆԵՍԿՕ-ում Հայաստանի ներկայացուցիչ Վահե Վահրամյանը, ինչպես նաեւ «RFI», «Ֆրանս-Արմենի», «Նոր Յառաջ», «Ռադիո ֆրի Յուրոպ», եւ «Եվրոպա եւ Արեւելք» պարբերականի լրագրողները:

Վերջին պարբերականի հիմնադիր խմբագիր **Վարուժան Սիրապյանը** հակիրճ ներկայացրել է Չոպանյան ինստիտուտի 2015-16 թվերի գործունեությունը Հայաստանում եւ Ֆրանսիայում, ներառյալ Կյունիի այցելությունը Չի-ի հրավերով ներկայացնելու իր «Armenie l'ame d'un peuple» (Հայաստան, մի ժողովրդի հոգին) վերնագրով գիրքը: Նա անդրադարձել է նաեւ Ազնավուր ընտանիքի եւ Մանուշյանի խմբի մասին պրոֆ. Յաիր Աուրոնի հրատարակած (ֆրանսերեն եւ հայերեն լեզուներով) գրքին:

Հ. Ծ.

AZG NEW SHABAT 1.QXD 08/03/2017 21:53 Page 5



# Ձեր բախտը բերել է

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

Ամեն քառյակից մեկն, ինչպես հայտնի է, կին է: Նկատի ունեմ՝ խորհրդարանական գալիք ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի համամասնական ցուցակները: Ընդ որում, միայն Նաիրա Զոհրաբյանն է, որ Ծառուկյան դաշինքի ցուցակի երրորդ համարն է, մյուսները, այդ թվում արդարադատության նախարար Արփինե Հովհաննիսյանը (ՀՀԿ), իրենց ցուցակների հենց չորրորդ համարներն են: Սա շատ կարեւոր է, քանի որ հետաքրքրական է, թե այդ կանայք իրենց ցուցակների որերո՞րդ տեղում կլինեին, եթե օրենք չլիներ՝ ամեն քառյակում գոնե մեկ կին ընդգրկելու մասին:

Այս առումով կանանց բախտն, ի դեպ, բերել է: Դե քանի որ յուրաքանչյուր քառյակում գոնե մեկ կին պետք է լինի, ապա նրանցից շատերն ավելի բարձր տեղեր են զբաղեցնում իրենց ցուցակներում, քան այն շատ տղամարդիկ, ովքեր ամեն օր իրենց կանանց ասում են, որ գնում են կուսակցություն (կամ դաշինք) աշխատելու, եւ իսկապես հենց կուսակցություն (կամ դաշինք) են գնում, իրոք՝ աշխատելու: Եթե կանանց ներգրավվածությունը ամեն քառյակում պարտադիր չլիներ, ապա այդ տղամարդկանց հավուր պատշաճի կգնահատեին, ցուցակներում բարձր տեղեր կտային, իսկ կան կուսակցություններ ու դաշինքներ, որտեղ 7-րդ տեղում նշվածը կարող է պատգամավորական մանդատ ստանալ, բայց այ 8-րդ տեղում նշվածը կարող է այդպես էլ պատգամավոր չդառնալ:

Մի խոսքով, կանանց բախտը մեր երկրում բերել է, որքան էլ այս կապակցությամբ զարմանան խոպանչիների կանայք, որոնք արդեն չորս տարի կլինի իրենց ամուսիններին միայն սքայփով են տեսնում, այն էլ ուշ ժամերին միայն, նրանց մոտից եկող կողմնակի կանանց ձայների զուգորդությամբ: Չնայած, ավելի ճիշտ կլինի ասել՝ մեր երկրում քաղաքականությամբ զբաղվող կանանց բախտն է բերել: Անգամ առաջիկա ընտրություններից դուրս մնացած տիկին Զարուհի Փոստանջյանի բախտն է բերել, դե քանի որ նա հաջորդ խորհրդարանում չի լինելու եւ կարող է հանգիստ ժամանակ անցկացնել իր չորս դուստրերի հետ, որոնց բախտը, փաստորեն, եւս բերել է:

Այլ հարց են քաղաքականությամբ չզբաղվող կանայք: Ի զարմանս տիկին Հեղինե Բիշարյանի եւ Նաիրա Զոհրաբյանի, այդպիսիք եւս լինում են: Որպես կանոն քաղաքականությամբ չզբաղվող մեր կանայք աշխատում են (ի տարբերություն՝ քաղաքականության մեջ ներգրավվածների), հաճախ՝ ընտանիքներում միակ աշխատողն են, եթե ուսուցիչ են, ապա չգնահատված են, եթե հացթուխ են, գիշերները տանը չեն, եթե լրագրող են, առհասարակ տանը չեն, մի խոսքով՝ նրանց բախտը չի բերել: Մեծ հաշվով, իհարկե, բերել է, քանի որ նրանք քաղաքականության մեջ չեն, բայց նրանց համար փոքր հաշիվներն այնքան շատ են, որ մեծ հարցերի վրա ուշադրություն դարձնելու ոչ ժամանակ ունեն, ոչ էլ տրամադրություն: Չնայած շատերը կուզենային թողնել դպրոցը, հացի արտադրամասը եւ մանավանդ լրագրողական գրիչ-թուղթն ու ընդգրկվել որեւէ կուսակցության համամասնական ցուցակի քառյակներից մեկում, լինել քառյակից մեկը: Կապ չունի՝ ո՛ր կուսակցության, կապ ունի, որ իրենք կլինեին քաղաքականության մեջ, ինչպես իրենց դպրոցի հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհին, ինչպես իրենց հացի արտադրամասի տնօրենը, ինչպես իրենց գործընկեր լրագրողը... Իրենց կարծիքով այդ պարագայում իրենց բախտը կբացվեր, չնայած հրաշալի կահույքագործ ամուսին ունեն, երեք աննման երեխա եւ մասնագիտություն, որի մասին ամբողջ կյանքում երազել են:

Ու ես անկեղծ ասած չգիտեմ, թե մեր երկրում ո՞ր կանայք են ավելի երջանիկ: Նրանք, ովքեր քաղաքականության մե՞ջ են, թե՞ նրանք, ովքեր շարունակում են հաց թխել, երեխա կրթել եւ կամ հոդված գրել: Ամեն դեպքում կապ չունի ո՞ր քառյակում եք, քառյակում որերորդն եք, այն, որ մատնաքաշը ձեզ մոտ ավելի լավ է ստացվում, քան պուրին, կամ գրականության դասերին ավելի լավ եք զգում, քան լեզվի, կամ ընդդիմադիր հոդվածները ձեզ մոտ ավելի լավ են ստացվում, այս ամենը բոլորովին էլ կարեւոր չէ:

Գարուն է, եւ դուք կին եք, ուրեմն ձեր բախտը բերել է:



# Մարդկանց խաբելու համար

**Ելք դաշինքն առաջարկում է ստեղծել ճշմարտության հանձնաժողով: Այսինքն, եթե առաջիկա խորհրդարանական ընտրություններում նրանք հաղթեն եւ ձեւավորեն կառավարություն, այլ կերպ՝ իշխանություն դառնան, երրորդ Հանրապետության գոյության ընթացքում տեղի ունեցած բոլոր աղմկահարույց հանցագործությունները (Հոկտեմբեր քսանյոթ, Մարտի մեկ եւ այլն) բացահայտելու նպատակով ստեղծելու են ճշմարտության հանձնաժողով, որի կազմում ընդգրկվելու են հասարակության շրջանում ճանաչված եւ վստահություն վայելող գործիչներ: Պատկերացրեցի՞ք:**

**Անկեղծ ասած ես ավելի հեշտությամբ պատկերացնում եմ այն, որ Ելքը կհաղթի ընտրություններում եւ իշխանություն կդառնա, քան այն, որ ճշմարտության հանձնաժողովը կբացահայտի ճշմարտությունը: Տեսեք, ենթադրենք հանձնաժողովի կազմում աշխատում է հարյուր հոգի, հարյուրն էլ ճանաչված, հարգված, սիրված, ոմանք անգամ՝ պաշտված, մի խոսքով՝ վստահելի անձինք: Նախ սա արդեն արժանահավատ չէ, որ Հայաստանում նման հարյուր հոգի կգտնվի, թեկուզ՝ հիսուն: Ենթադրենք գտնվեց: Հավաքվում են, ենթադրում եմ՝ հանձնաժողովի նորակառույց շենքում, որը պետք է որ ժամանակակից լինի, անհրաժեշտ սարքավորումներով եւ որի բոլոր պատուհաններից պետք է երեւա ճշմարտությունը: Հանձնաժողովի բոլոր աշխատողները պետք է ստանան բարձր աշխատավարձ, քանի որ եթե ցածր ստանան, ապա կկաշառվեն, իսկ եթե կաշառվեն, էլ ի՞նչ ճշմարտություն: Հետո հավաքվում են նիստի, քննարկում են ինչ-որ հանցագործություն: Ի դեպ, օնլա՞յն են քննարկում, թե՞ հանրությանը հանձնաժողովի քննարկումների տեսագրված, խմբագրված, հղկված, սրբագրված տարբերակն է ներկայացվելու: Եթե առաջինը, ապա ճշմարտության հանձնաժողովի նիստերը 18+ են լինելու (նիստերի ժամանակ օգտագործվող բառապաշարի եւ ցուցադրվող մերկացնող կադրերի պատճառով) եւ հեռարձակվելու են ուշ գիշերային ժամերին, ինչը փաստորեն նշանակում է, որ օնլայն չի կարող լինել, քանի որ հանձնաժողովի անդամներին հնարավոր չէ ամեն օր կեսգիշերն անց հրավիրել նիստի: Եթե օնլայն չի լինելու, այլ խմբագրվելու է, մոնտաժվելու է, ապա ո՞ր կտորները, որոնք հանրությանը հետաքրքրական չե՞ն, իսկ ո՞վ է որոշելու, թե ճշմարտության բացահայտման ո՞ր կտորները հանրությանը հետաքրքրական չեն: Գուցե մի առանձին՝ Որոշող հանձնաժողովն էլ ձեւավորվի, որ սա որոշի...**

**Բայց սա դեռ գլխավոր խնդիրը չէ: Ենթադրենք բացահայտվում է ինչ-որ աղմկահարույց հանցագործություն, բայց պարզվում է, որ ճշմարտության հանձնաժողովի փոխնախագահի մորաքրոջ որդին այդ հանցագործության շահագրգիռ կողմ է, իսկ Հանձնաժողովի փոխնախագահն ուղղակի պաշտում է իր մորաքրոջն ու նրա որդուն: Ի՞նչ պետք է անեն, գուցե Հանձնաժողովը հանի՞ այդ մարդուն իր կազմից, տարածելով հայտարարություն, թե այդ մարդը, ինչպես պարզվեց, հանրությանը լավ ծանոթ չէր եւ հարգված չէր, ինչը պարտադիր է ճշմարտության հանձնաժողովի անդամ լինելու համար:**

**Ի դեպ, երբ Հանձնաժողովը բացահայտի եւ հանրությանը ներկայացնի բոլոր-բոլոր հանցագործություններն ու դրանց մեղավորներին, ի՞նչ է լինելու, լուծարվելո՞ւ է, թե ենթադրենք դառնալու է նախարարություն, հենց նույն անունով՝ ճշմարտության նախարարություն, ճշմարիտ նախարարով: Օրինակ, Օրուելը իր «1984» վեպում ստեղծել էր ճշմարտության նախարարություն, ու գիտե՞ք, թե ինչ էր անում այդ նախարարությունը: Իրականությունը ներկայացնում էր որպես ճշմարտություն, օրինակ՝ տվյալ պետությունը պատերազմում է այլ պետության հետ, ուրեմն այդ պետությունը ներկայացվում է թշնամի, իսկ վաղը բարեկամանո՞ւմ է, ապա ներկայացվում է բարեկամ: Ընդ որում, ճշմարտության նախարարության գործառույթն այն էր, որ մամուլի բոլոր այն տողերը, որտեղ այդ պետությունը որպես թշնամի էր ներկայացված, փոխվեն եւ այդ պետությանը հիմա էլ բարեկամ ներկայացնեն, իբր երբեք թշնամի ներկայացրած չեն եղել: Դե, այսինքն՝ խաբեն:**

**Մի խոսքով, ճշմարտության նախարարությունը, գոնե Օրուելի ստեղծած, մարդկանց խաբելու համար էր:**

Հ. ԱՖՅԱՆ

# Չարչարված, տանջված եւ կույր

**Երեքշաբթի օրը, երբ Ծառուկյան դաշինքն ու Օհանյան-Րաֆֆի-Օսկանյան դաշինքը Տավուշում նախընտրական հանդիպումներ էին ունենում, տեղի ունեցավ երկու ուշագրավ դեպք: Նախ, պարոն Ծառուկյանին Տավուշի գյուղերից մեկում մոտեցել է մի չափահաս տղամարդ եւ նրան հարցրել՝ «Պարոն Ծառուկյան, մայրս արդեն 50 տարի կույր է, չի տեսնում, հիմա այս խնդիրը ո՞նց պետք է լուծվի»: Պարոն Ծառուկյանը խոստացել է, որ բոլոր խնդիրները լուծվելու են, եւ կրկնել է, որ ինքը հենց այդ նպատակով էլ վերադարձել է քաղաքականություն, խաչը վերցրել է եւ այս անգամ այն մինչեւ վերջ կրելու է: Համաձայնեք, որ հատկապես կույր մարդկանց խնդիրների լուծման հարցում խաչակրությունը շատ կարեւոր է:**

**Եւ երկրորդը, Օհանյան-Րաֆֆի-Օսկանյան դաշինքի՝ Իջեւանյան հանդիպման ժամանակ (ի դեպ, այս դաշինքի նախընտրական հանդիպումներում Րաֆֆի Հովհաննիսյանը բացակայում է, հավանաբար Ամերիկայում կարեւոր գործեր ունի), Սեյրան Օհանյանը հայտարարել է՝ «Ես ուզում եմ մեր ժողովրդի հետ չարչարվել, տանջվել...»: Գնահատելի անկեղծություն է: Ամեն դեպքում, մարդը կարող էր տուրք տալ պոպուլիզմին եւ հայտարարել, որ ինքը քաղաքականություն է մտել, որպեսզի այլեւս թույլ չտա, որ մեր ժողովուրդը չարչարվի, տանջվի: Կամ նա կարող էր պարզապես ռոմանտիկ ցանկություն հայտնել, թե ինքը չի ցանկանում, որ մեր ժողովուրդը շարունակի չարչարվել, տանջվել: Սակայն որոշել է անկեղծ լինել եւ հստակ նշել, թե ի՞նչ է լինելու, եթե ժողովուրդը ընտրի ՕՐՕ դաշինքին: Եթե հիմա միայն ժողովուրդն է տանջվում, չարչարվում, ապա ՕՐՕ դաշինքի իշխանության գալուց հետո Սեյրան Օհանյանն էլ ժողովրդի հետ միասին տանջվելու եւ չարչարվելու է: Պարոն Օսկանյանի հարցում վստահ չեմ, իսկ այ պարոն Րաֆֆին այդ ժամանակ էլ հավանաբար կարեւոր գործեր կունենա Ամերիկայում:**

**Մի խոսքով, քարոզարշավը եռում է, վարչապետ Կարեն Կարապետյանի ձեռքի տակ հայտնված թմբուկների ու սիմբալի պես: Ի դեպ, լավ է նվագում, անգամ կարելի է ՀՀ վարչապետների առումով սահմանադրական մի փոփոխություն մտցնել, ըստ որի Հանրապետության վարչապետ նշանակվելու համար թեկնածուն պետք է տիրապետի առնվազն մեկ երաժշտական գործիքի: Այս իմաստով ուշագրավ է, որ նախկին մեր վարչապետներից Հրանտ Բագրատյանը նվագում էր, Տիգրան Սարգսյանը՝ նույնպես, երկուսն էլ կիթառ:**

**Ինչեւէ, սա հետագայի հարց է, հիմա մի կարեւոր հարց կա: Ինչպես անել, որ ՕՐՕ եւ Ծառուկյան դաշինքները միանան: Ես անգամ անվանում եմ մտածել այս հուժկու դաշինքի համար՝ ԾՕՐՕ: Խնդիրն այն է, որ Ծառուկյանը խոսք է տալիս, որ մենք չենք տանջվելու, իսկ ՕՐՕ դաշինքը գնում է տանջվելու: Միասին ոչ մեկս չենք տանջվի: Էլ չեմ խոսում՝ չարչարվելու մասին: Պարոն Ծառուկյանը բարեգործություն կանի, եթե օգնեց՝ լավ, եթե չօգնեց, եկեղեցում մոմ կվառենք, դա միշտ օգնում է, առնվազն հայրենական մոմագործության զարգացմանը:**

**Դե դուք միայն պատկերացրեք, թե որքան հետաքրքրական եւ ուրախ կանցնեն ԾՕՐՕ դաշինքի նախընտրական հանդիպումները: Մեկը մյուսից ուժեղ, հուժկու, հաղթանակած, բարեգործ, ազնիվ, պարկեշտ մարդիկ: Ծառուկյանը դիվանագիտությունից բան չի՞ հասկանում, Օսկանյանը կօգնի, կդժվարանա՞, Րաֆֆիին Ամերիկա զանգ կտան, կգա: Ռազմավարություն մշակելու հարց կա՞, Օհանյանը պատրաստ է՝ որպես հմուտ ռազմական գործիչ, բանակաշինության լուրջ մասնագետ, փողի՞ կարիք կա, փողի կարիք չկա: Մի խոսքով, իդեալական դաշինք կլիներ, եթե միայն կողմերը կարողանային որոշել, թե ո՞վ է լինելու առաջինը, երկրորդը, երրորդը... Տասնմեկերորդը պարզ է, Րաֆֆին է:**

**Ես չգիտեմ, գուցե այս առաջարկս ժամանակավրեպ է, բայց եթե այդպես չէ, խնդրում եմ փորձեք, ամեն դեպքում, պարոն Օհանյանն էլ ստիպված չի լինի Վահագնի թաղամասում վարձով ապրել եւ ամիսը չորս հազար ամերիկյան դոլար տան վարձ տալ. Ծառուկյանը մի բնակարան կնվիրի:**

**Իսկ եթե, այնուամենայնիվ, ժամանակավրեպ է, ապա խնդրում եմ ժամանակ գտեք եւ մի ծրագիր գրեք այն մասին, թե ինչպես անել, որ այլեւս չչարչարվենք, չտանջվենք եւ կարողանանք տեսնել:**

**Գրե՞լ եք, բայց մենք տանջված, չարչարված եւ կույր ենք, չենք տեսնում:**

Հ. ԱՖՅԱՆ

AZG NEW SHABAT 1.QXD 08/03/2017 21:53 Page 6



# Ո՞վ կթրամփի Հայաստանում

⇨1 Կամ՝ որ վարչապետը անկեղծանում է ընտրողների հետ հանդիպումներում ու տնավարիմետրիկ խոսում, իսկ Ծառուկյանին էլ ժողովուրդն է պատին դեմ տալիս ու այս ու այն ուզում: Բայց, իհարկե, հաճելին քիչ է, իսկ տհաճն՝ անսպառ:

Ամենուր՝ կանգառներում, տաքսիներում, ընտանեկան հացկերույթի սեղանների շուրջը մեկ խոսակցություն է այն մասին, թե՝ բոլորն էլ նույնն են, իրար բերան քթած ունեն, ոչ մեկին էլ պետք չի ձայն տալ, կամ էլ՝ ով շատ փող է տալիս, նրան էլ ընտրեք: Միմյանց այդ խորհուրդը տալուց հետո սկսվում է ընտրակաշառքի չափերի մասին խոսակցությունը՝ այդ թեմայով նորություններն են իրար փոխանցում մարդիկ: Էրեբունիում քսան հազար դրամ են տալիս մեկ քվեի դիմաց, չեն էլ ամաչում՝ Ավանում գոնե նրանցից թասիբով են՝ լսե՞լ եք, հարյուր դոլար են տալիս, բայց, իհարկե, ամենաշատ փողը Մալաթիայում է ՝ Լֆ..., կներեք, դե Սամվել Ալեքսանյանն, էլի, այնտեղ շատ մեծ խոստումներ է տալիս: Ընդհանրապես, ըստ այդ խոսակցությունների՝միջին ընտրակաշառքը մեկ քվեի դիմաց տատանվում է 15-20 հազար դրամի սահմաններում: Այս բովանդակությամբ զրույց կլսես ամենուր: Երբ հարցնում ես՝ կոնկրետ ո՞վ է տալիս, որտեղ եւ երբ՝ այ այստեղ արդեն բոլորը խոսքը կտուրն են գցում, կա՛մ ես վստահելի տեսք չունեմ, կա՛մ այդ լեգենդների գոնե մի մասը հընթացս են հորինվում: Միգուցե այս մեթոդական օգնությանը դիմենք՝այս խոսքուզրույցին չհավատացողներին առաջարկենք Հայաստանի նախկին նախագահ Ռոբերտ Քոչարյանի ասածը, թե՝ ակնհայտ է, որ առաջիկա ընտրություններում լինելու է քսակների կռիվ՝ զոռբայության մթնոլորտում, միջկուսակցական պայքար էլ չկա՝ անձերի մրցակցություն է: Է, ով նրանից ավելի լավ գիտի մեր քաղաքական դաշտը, որի մի մասի ճարտարապետը հենց ինքն է, ու նրան չհավատալու որեւէ պատճառ այս առումով չունենք: Մանավանդ՝ նա եւս տեսնում է, որ ռեյտինգային քվեարկությամբ խթանվելու է այդ ամենը:

Համենայնդեպս՝ ԿԸՀ-ն առայժմ Գագիկ Ծառուկյանին է միայն զգուշացնում, թե դրամական ու նյութական խոստումներ տալն օրենքի խախտում է, չնայած նույն կերպ, ասենք՝ մայրական կապիտալը բազմապատկելու, պայմանագրային զինծառայողների աշխատավարձը կոնկրետ թվերով բարձրացնելու եւ ընդհանրապես մեր աշխատավարձերի հետ բազմապատկման գործողություն կատարող այլ թվային խոստումներ ընտրություններին մասնակցող ուժերի բոլոր առաջնորդներն են տալիս, դրանք, պարզվում է, ընտրակաշառք չեն: Կամ՝ եթե ասում են, թե կոնկրետ այս ու այն քաղաքական ուժի ներկայացուցիչը ընտրակաշառքի այս գինն է սահմանել, դեռ պետք է քաղաքացի գտնվի, որ գնա ու հայտնի, թե իրեն այդ ընտրակաշառքը տվել են, այլապես ոչ ոք դա չի կարող տեսնել, չես բռնվել՝ գող չես:

ԿԸՀ զգուշացումից հետո էլ Գ. Ծառուկյանն արդեն ուղղել էր իրեն, ասում էր հարցերը ցուցակագրեք, ընտրություններից հետո կօգնենք, որ ընտրակաշառք չդիտվի:

## Թրամփի սինդրոմ

Երբ ի հեճուկս բոլոր հարցումների, Թրամփը հաղթեց ԱՄՆ նախագահական ընտրություններում, ամբողջ աշխարհում փաստորեն սոցիոլոգիական հարցումների ինստիտուտի հեղինակությունը սասանվեց: Դե՝ եթե Միացյալ Նահանգների նման երկրում սոցիոլոգիան սխալվում է, Հայաստանի նման երկրում կսխալվի ու կսխալվի: Համենայնդեպս՝ նկատվում է, որ Թրամփի դասերը մեր սոցիոլոգները յուրացրել են, ու երբ Gallup International Association-ը «Ծառուկյան» դաշինքին է առաջատար տոկոս տալիս իր առաջին հարցումների արդյունքում, նշանակում է՝ ավելի բարդ ու խուճուճ տեխնոլոգիաներ են որդեգրվելու, որոնցով ի վերջո վերջին՝ երրորդ հարցումից հետո իշխանության ցանկալի արդյունքը դուրս են բերելու: Միգուցե առաջին հարցումն, իրոք, կարող էր օբյեկտիվ լինել՝ ՀՀԿ-ի երկրորդ տեղում լինելու առումով, քանի որ տարիներ իշխանության եղած ու առանձնապես մարդկանց վիճակը չբարելաված որեւէ կուսակցություն, այս դեպքում՝ ՀՀԿ-ն, չի կարող բարձր վարկանիշ ունենալ: Սակայն, երբ ժողովրդին ոչինչ չասող «Ազատ դեմոկրատներին» համարյա ՀՅԴ-ի չափ ձայն են տալիս՝ 3.4 % (թող ներեն ինձ այս կուսակցությունում առկա իրոք մտածող մարդիկ՝ նրանց քաղաքական ուժի անունը մեր մարզերում ոչինչ չի ասում), սա նշանակում է, որ մի բան այն չի, կամ էլ հարցումը կատարվել է միայն օպերային թատրոնի շրջակայքում: Սակայն առավել հավանականն այն է, որ այդ թիվը, ինչպես «Օհանյան-Րաֆֆի-Օսկանյան» դաշինքին տրված 1,8 % թիվը, այն ծրագրի մեջ են, երբ լվից ուղտ են սարքում, որ փղերը չերեւան: Դե, իհարկե, ընտրությանը մասնակցող ուժերի մեջ իրական փղեր չկան, իրենց ընդդիմություն անվանողների մեջ՝ նույնպես, տղերքով մետր առ մետր գնում են՝ մինչեւ հասնեն տեղ (խորհրդարան), սակայն երբ ՕՐՕ-ին նախնական տոկոսներով այսքան քիչ են տալիս, իսկ «Ազատ դեմոկրատներին» իրենց ճանաչման համեմատ՝այսքան շատ, մտածում ես, որ Gallup International Association-ը, հարցումն իրականացնող հայ սոցիոլոգներով, մի նոր տեխնոլոգիա է կիրառելու, որի արդյունքում ընտրարշավի վերջում ՀՀԿ-ի ու «Ծառուկյան» դաշինքի թվերը հավասարվելու են, ՕՐՕ-ինն ավելի են նվազելու, եւ ունենալու ենք նախապես գծված քաղաքական քարտեզին համապատասխան պատկեր, որպես իրեղեն ապացույց մաքուր ընտրության: Ձեր հոր սիրուն՝ իրականությունից մի կտրվեք, ու նաեւ միայն օպերայի շուրջը հարցումներ մի արեք: Հա, հասկացանք՝վերեւներին ցանկալի խորհրդարանը կարկասանային է ու առանց ՕՐՕ-ի, որտեղ այնպիսի կառավարելի պատկեր կլինի, որ վարչապետ կամ ԱԺ նախագահ ունենալիս ոչ մի անակնկալ չի լինի: Բայց չմոռանանք, իրոք, Թրամփի ֆենոմենի մասին, այդ ֆենոմենն, ինչպես ասում են, սոցիոլոգիայի «կատուն ճղել է», ու Հայաստանում էլ, Երեւանի փոքր կենտրոնից բացի, կան մարզեր ՝ լրիվ ընդդիմադիր իշխանությանը, ու իրենց ընդդիմադիր անվանող առնվազն երկու հոգի ունեն Թրափի ֆենոմենը կրկնելու, այսինքն՝ Հայաստանում թրամփելու հնարավորությունը:

Նույնիսկ տեսականորեն այդ հնարավորությունն ունի ՀՀԿ-ն, քանի որ աշխատեցրեց նոր մարդու՝ Կարեն Կարապետյանի գործոնը: Հին մեղքերը նորի երեսով տալ մեր ժողովուրդը չի սիրում, ասում է՝ էս մարդու աշխատելը դեռ չենք տեսել, ոնց որ ուզում է աշխատել, հիմա ինչ իմանանք՝ սա դեռ չի աշխատել, իսկ բոլոր մնացածի աշխատելը տեսել ենք: Ու այդպես ձայնը կտան նաեւ Կարեն Կարապետյանին, որ, ճիշտ է, ՀՀԿ ցուցակում չկա, բայց նա է տանում ՀՀԿ ընտրարշավը, ու սա տասին խփող տրյուկ է. Կարեն Կարապետյանը, Վիգեն Սարգսյանը, Արփինե Հովհաննիսյանը, իրենց ուսերին տանելով ՀՀԿ-ի քարոզչական բլոկը, փորձում են ծածկել ռեյտինգային քվեարկության ողջ տձեւությունը:

Այնպես որ՝ երկու մարդ իրենց ընդդիմություն կոչողներից (դիտավորյալ ուժ չենք ասում, քանի որ Հայաստանում բոլոր ուժերը համարյա անձնակենտրոն են) եւ Կարեն Կարապետյանը, ի դեմս ՀՀԿ-ի, դեռ կարող են թրամփել, նայած ժողովուրդը ում ժպիտին (խոստումներին) կհավատա:

## Անեկդոտներ՝ աղքատ բարեկամիս համար

Գագիկ Ծառուկյանը Թումանյանի «Անխելք մարդը» հեքիաթն է պատմել ընտրողների հետ հանդիպմանը՝ անեկդոտային ինտերպրետացիայով եւ բիզնես մատուցմամբ՝ նավ, ծով եւ այլն: Այսինքն՝ փաստորեն, ժողովուրդն է էն անխելք մարդը, որ չի ընդունում փրկվելու (հարստանալու՝ Թումանյանի դեպքում) առաջարկը եւ կրկին մնում է աղքատ՝ խաբվելով գործող իշխանությանը: Մի խոսքով՝ ժողովուրդն անխելք է ու իր օգուտը չգիտի, որի հակառակը «Ծառուկյան» դաշինքին ձայն տալն է: Այլ մեկնաբանություններ կա՞ն անեկդոտի (հեքիաթի) վերաբերյալ:

Իսկ վարչապետ Կարեն Կարապետյանի պատմած անեկդոտի առումով անգամ այլ մեկնաբանությունների առաջարկ հնչեցնել պետք չէ. գինովցած տղամարդը (իշխանություն), հերթական անգամ ուշ տուն գալիս (ժողովրդի առաջ իր պարտականությունները չի կատարում այսինքն), կնոջ հարցին ի պատասխան, թե՝ էս անգամ ինչ պատճառաբանութուն ես բերում, ասում է՝ դու խելոք ես , էս անգամ դու ասա: Ժողովուրդն էս անգամ կինն է, որից խելոք միտք են սպասում: Է, չե՞ք վախենում, որ կասի, քվեի տեսքով:

## Չմոռանանք հանկարծ

Արցախի հարցի հետ կապված նոր զարգացումներ կան, դրանց որոշակի երանգներ տեսանելի են եւ Սերժ Սարգսյան-Ֆրանսուա Օլանդ հանդիպումներում, Հայաստանի ու Արցախի սահմաններում առկա լարվածության մեջ, դրանց ցուցիչ է մի քանի օր հետո ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների սպասվող այցը Բաքու: Համենայնդեպս՝ մի շարք տարբեր հայտարարություններ, ներառյալ Ֆրանսուա Օլանդինը, խոսում են այն մասին, որ մենք, զբաղված ընտրական գործընթացով, ինչ որ բան կարող ենք աչքաթող անել: Համենայնդեպս՝ հետաքրքրական է, որ Փարիզում, Հայաստանի նախագահի հետ հանդիպումներից ոչ պաշտոնականի ժամանակ Օլանդն ասել է, թե ոչինչ այնքան վատ չէ, որքան ստատուս քվոն՝ հիշելով, որ շատ անգամներ է բանակցային գործընթացը մոտ եղել լուծման, բայց դա չի ստացվել: Ու, չնայած դրան, ըստ Օլանդի, պետք է բանակցել, քանի որ ռազմական լուծումը բացառված է, սեղանին էլ Մադրիդյան սկզբունքներն են, որոնց իրագործմանն աջակցում է Ֆրանսիան: Թե ինչ սկզբունքներ են դրանք՝ բոլորս գիտենք, ինչ են խոսելու համանախագահները Բաքվում, սա էլ ենթադրվում է՝ Ադրբեջանին մեր հասկացնելիքը հասկացրել ենք, թող գնա ու որտեղ իրենը կասի, մերն էլ հիշի: Բայց այս օրերին աչքաթող չանենք հակառակորդի նենգությունը, որը միշտ սրվում է համանախագահների տարածաշրջան այցերին նախորդած շրջանում:

# ԵՄ-Հայաստան համաձայնագիր. եվրոպական «արժեհամակարգի» գիշատիչները կարող են ցնծալ

⇨3 Սակայն, ինչպես արդեն նշեցինք, Հայաստանը չի անցել եւ բարեբախտաբար չի անցնի այս դաժան ճանապարհը, քանի որ Հայաստանի եւ ԵՄ համաձայնագրի տնտեսական բաղադրիչը երկրորդական է: Դատելով ԵՄ պաշտոնյաների հայտարարություններից, այդ պայմանագրով Հայաստանի եւ ԵՄ միջեւ հարաբերությունները զարգանալու են դեմոկրատիայի զարգացման, օրենքի գերակայության, կոռուպցիայի դեմ պայքարի, մարդու իրավունքների պաշտպանության եւ օրենսդրության կատարելագործման ոլորտներում: Սակայն այն իր մեջ լուրջ վտանգ է պարունակում, քանի որ «դեմոկրատիա» կոչվածը ԵՄ-ն պարզաբանում եւ կիրառում է ըստ նպատակահարմարության: Մասնավորապես, եթե Ֆրանսիայում ոստիկանությունը արցունքաբեր գազ կիրառելով բողոքի ցույց է ցրում, այդ դեպքում ԵՄ-ն չի ասում, որ կիրառվել է «անհամաչափ ուժ»: Երբ դա տեղի է ունենում Երեւանում (Քիշնեւում, Մոսկվայում, Սկոպիեյում եւ այլն), ապա հայտարարվում է ոստիկանության կողմից «անհամաչափ ուժ» կիրառելու մասին: Կամ, երբ Նիդեռլանդներում հանրաքվեի ժամանակ Ուկրաինայի ասոցիացմանը ԵՄ-ին «ոչ» է ասվում, ԵՄ կառույցները փորձում են տարբերակներ գտնել ժողովրդի «ոչ»-ը շրջանցելու եւ իրենց համար քաղաքական որոշում ընդունելու համար: Եթե Հայաստանում ժողովրդի գերակշիռ մասը «ոչ» է ասում այլասերվածությանը (սեռական փոքրամասնություններին, յուվենալ արդարադատությանը եւ այլն) եւ այն օրինականացնելու՝ մարդկանց փոքր խմբերի ցանկությանը, ապա դա «եվրոպական արժեհամակարգի» տեսանկյունից անհամատեղելի եւ դատապարտելի է համարվում: **Այսինքն, չնայած «դեմոկրատիան» հին հունարենով ժողովրդի իշխանություն է համարվում, բայց ԵՄ չինովնիկների համար ժողովրդի ձայնը հաշվի առնելը ամենեւին էլ կարեւոր չէ, եթե տվյալ պահին այլ բան է անհրաժեշտ:**

Ի դեպ՝ այլասերվածության եւ այն քարոզողների մասին: Սրանք են դառնալու ԵՄ հետ «համապարփակ եւ ընդլայնված գործընկերության» համաձայնագրի դառը պտուղները, որ առաջիկայում մենք պարտադրված ենք լինելու քաղել եւ ուտել: Եթե մինչ այժմ «Ընտանեկան բռնության մասին», «Խտրականության մասին» եւ նման անմեղ անվանումով օրենքներն առաջ մղող գրանտակերներին հանրության առողջ հատվածը եւ բնակչության գերակշիռ մեծամասնությոնը կարողանում էր դիմակայել ու թույլ չտալ, որ արդարադատության նախարարության թեթեւ ձեռքով դրանք օրենքի նախագիծ դառնան, ապա հիմա «եվրոպական արժեքների» քարոզիչները կանաչ լույս են ստանալու եւ պարտադրելու են պետությանը ընդունել ազգային արժեքները քայքայող, հայկական ընտանիքը կործանող օրենսդրական նախաձեռնությունները:

**Կարեւոր չէ, որ բռնությունը պետք է պատժվի՝ անկախ նրանից՝ ընտանիքում է, թե՞ ընտանիքից դուրս, որ դրա համար պետք է պարզապես գործող օրենքները կիրառել, եվրոպական «արժեհամակարգի» գիշատիչները, միեւնույնն է, պնդելու են, որ հենց իրենց օրենքն է կանխելու բռնությունները եւ կարեւոր էլ չի նրանց համար, որ այդպիսով հող են ստեղծում, որ ամուսինների միջեւ տհաճ խոսակցությունն անգամ դիտարկվի որպես ընտանեկան բռնություն եւ հանգեցնի ընտանիքի քայքայմանը: Կարեւոր չէ, որ նման օրենք ունեցող երկրներում ընտանեկան բռնության ծավալները տասնյակ եւ հարյուրավոր անգամներով են գերազանցում Հայաստանում նման դեպքերին, կարեւորը, որ իրենք կցնծան իրենց «պյուռոսյան» հաղթանակով եւ մեր բոլորիս պարտությամբ: Միասեռականների «իրավունքները» ստիպված ենք լինելու մի այլ կարգի հարգել ու պաշտպանել, խտրականություն չդրսեւորել, «տոլերանտ» լինել նրանց երթերի եւ ապրելաձեւը մեզ պարտադրելու երեւույթի նկատմամբ, քանի որ նրանք ամենազոր ԵՄ հովանու ներքո են լինելու այսուհետ: Ապա կգա յուվենալ արդարադատության հերթը, երբ երեխան իրավունք կունենա ծնողի դեմ բողոքել, օրինակ՝ այն բանի համար, որ ծնողը թույլ չի տվել նրան գիշերային ակումբ գնալ կամ դիտողություն է արել ինչ-որ սխալ քայլ կատարելու համար: Հետո կգա մասնագիտացված պետական կամ պետության կողմից ֆինանսավորվող կառույցի ներկայացուցիչը եւ երեխային կխլի իր ընտանիքից՝ նրա իսկ բողոքի հիման վրա՝ ծնողից նրան «պաշտպանելու» համար, իսկ ծնողի դեմ՝ քրեական գործ կհարուցվի «երեխակի իրավունքների ոտնահարման» համար:**

Հիմա հարց՝ բավարարվե՞նք նրանով, որ տնտեսական բաղադրիչը չի գերակշռում Հայաստան ԵՄ համաձայնագրում...

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Ստեփանակերտ

# Եւ վերադարձնելով ձեր դիմանկարը Ռասիմ Աղաեւին

Ռասիմ Աղաեւը ժամանակին զբաղեցրել է Ադրբեջանի նախագահի խոսնակի պաշտոնը: Մինչ այդ լրագրող է աշխատել, այդ թվում եւ՝ արտասահմանում: Ներկայումս haqqin.az-ի հեղինակներից է: Նրան զայրացրել է, որ «Նեզավիսիմայա գազետան» անդրադարձել է Խոջալուի 25-ամյա վաղեմության դեպքերին: Աղաեւին հատկապես նյարդայնացրել է Արսեն Մելիք-Շահնազարովի խոսքը: Եւ ահա նա հոդված է հրապարակել, որտեղ փորձում է ապացուցել, որ Սումգայիթում եւ Բաքվում հազարավոր ադրբեջանցիներ պաշտպանել են հայերին, իսկ «Երեւանի կամ Ստեփանակերտի մի բնակիչ գոնե կգտնվի՞, որ հիշի իր կողմից փրկված մի ադրբեջանցու»:https://haqqin.az/news/94319

սեն մարդկանց գլուխները չափել,- կատարվածին արձագանքել է Յունուսովան, որն, ի դեպ, մի քանի տարի առաջ «Հայաստանի օգտին լրտեսությամբ զբաղվելու» մեղադրանքով դատապարտվել է 8 տարվա ազատազրկման, միջազգային կառույցների ճնշման տակ ազատ արձակվել եւ արտաքսվել Ադրբեջանից՝ ամուսնու հետ միասին:

Նույն տեղում կարդում ենք. «Ջարդի օրն Արզու Աբդուլլաեւան տեսնելով, թե ինչպես է ամբոխը հետապնդում փախչող տղամարդուն, մոտեցել է մի ձեռքում ավտոմատ, մյուսում «Սկազկա» տորթ բռնած սաղավարտով զինվորին եւ հարցրել. «Ինչո՞ւ չեք միջամտում, ինչո՞ւ չեք պաշտպանում մարդկանց»: Զինվորը պարզ պատասխան է տվել. «Մենք հրաման չունենք»:

Ժլատ տողեր են, բայց եթե պատկերները դնում ես կողք-կողքի, ապա ստացվում է, որ փողոցում ամբոխը հետապնդում է հայ տղամարդու, անկյունում կանգնած է զին-

վորը, որին ադրբեջանցիները հյուրասիրել են «Սկազկա» տորթ, որպեսզի զբաղվի եւ ոչինչ չձեռնարկի, հայ տղամարդուն պաշտպանելու փորձ ոչ ոք չի ձեռնարկում, միայն մի կին մոտենում է զինվորին եւ հարցնում, թե ինչո՞ւ ոչինչ չի անում, զինվորն էլ թոթվում է ուսերը, «Մենք հրաման չունենք»:

Հաջորդ պատկերն ավելի խոսուն է. «Համալսարանի գիտական աշխատողը գործից տուն վերադառնալիս տեսել է, թե ինչպես է հայի լրիվությամբ կողոպտված բնակարանից մի ծեր կին թոռան հետ դուրս գալիս՝ հետը քարշ տալով էմալը թափած մի թեյնիկ:

- Այդ թեյնիկի համար դու երեխայի հոգի՞ն ես խեղդում,- հարցնում է նա պառավ ջարդարարին: Իսկ նա կարծես ոչինչ չի եղել՝ հեռանում է թոռան հետ»:

Որեւէ մեկն այստեղ մարդասիրության կամ գոնե պարկեշտության նշույլ տեսնո՞ւմ է: Ընդ որում պետք է նկատի ունենալ, որ գրքի հեղինակներն ադրբեջանցի են, ամբողջ ճշմարտությունը չէին կարող ասել կամ չեն ցանկացել ամեն ինչ պատկերել՝ ինչպես իրականում եղել է: Բայց ասածն էլ բավական է, որպեսզի պատկերացում կազմենք Բաքվի հայկական ջարդերի բնույթի մասին: Ադրբեջանական քարոզչությունը զուր է ճգնում տպավորություն ստեղծել, թե «զանգվածային անկարգությունները չեն կրել էթնիկ անհանդուրժողականության բնույթ», թե «հազարավոր ադրբեջանցիներ ապաստան են տվել իրենց հայ հարեւաններին»: Իրականությունը հայ կողոպտված բնակարանից վերջին էմալաթափ թեյնիկը տանող պառավի եւ թոռան վարքն է: Պատկերի իմաստն այն է, որ նրանք էլ իրենց բաժին վրեժն են լուծել, ստացել իրենց բաժին բավարարվածությունը, որ կարողացան մի հայի վնաս հասցնել, հրճվել նրա բնակարանի ավերակների վրա...

Ինչ վերաբերում է Խոջալուին, ապա երկու մեջբերում անենք. «1992թ. փետրվարի 18-ին ԱԺՃ մեջլիսը «Ազադլըղ» թերթում

հրապարակում է իր որոշումը, որն ստորագրել էր ԱԺՃ մեջլիսի նախագահ Արիֆ Հաջիեւը: Ժողճակատը Մութալիբովին առաջարկում էր կամավոր հրաժարական տալ: ԱԺՃ-ն միայն այդ դեպքում էր երաշխավորում նրա եւ ընտանիքի անվտանգությունը եւ երկրից հեռանալու հնարավորությունը, եթե նա ցանկանար դա: Հակառակ դեպքում ԱԺՃ-ն սպառնում էր դիմել ուժի եւ կանգ չառնել արյունահեղության առաջ»:

Այնուհետեւ, Խոջալուի բնակչության թվաքանակն Ալիզադեի եւ Աղաեւի գրքում նշված է «(շուրջ 1500 մարդ»), իսկ խոսելով սպանվածների դիակները պատկերող կադրերը մարտի 5-ին ԳԽ նստաշրջանում ցուցադրելու մասին, հեղինակները գալիս են այսպիսի եզրահանգման, որ դրանք շատ ծանր են ազդել ադրբեջանական հասարակության վրա, վախ ներշնչել, ինչը պատճառ է դարձել, որ բնակչությունը, նույնիսկ զինվորները, լսելով, որ հայերը գալիս են,

Չի գտնվի, Աղաեւը ճիշտ է ասում: Բայց չի գտնվի, որովհետեւ Երեւանում եւ Ստեփանակերտում ադրբեջանցիների ջարդեր չեն կազմակերպվել: Մարդիկ պարզապես հեռացել են: Իսկ ի՞նչ է կատարվել Բաքվում՝ դիմում եմ Զարդուշտ Ալիզադեի եւ Ռասիմ Աղաեւի հեղինակած «Երկրորդ հանրապետության վախճանը» գրքի օգնությանը:

Նկարագրելով 1989թ. նոյեմբերի վերջերի Բաքուն, Ալիզադեն հիշում է, թե ինչպես մի ուշ երեկո, մտնելով ժողճակատի կենտրոնական գրասենյակ, ականատես է լինում, որ մի խումբ երիտասարդներ ծեծում են մեկին:

- Ի՞նչ է կատարվում, ինչպե՞ս եք ձեզ թույլ տալիս նման բան,- հարցնում է նա:

- Բռնել ենք հայի, աստճանակն ինչ- որ տեղ է շպրտել, չի ասում՝ որտեղ, ծեծում ենք, որ ասի,- պատասխանում է հեղինակին հայտնի «տղաներից» մեկը:

Իսկ ովքե՞ր էին հայ մարդուն ժողճակատի գրասենյակ բերողները: Բաքվի 26 կոմիսարների շրջանի միլիցիայի երկու սպա աշխատակից: Որտե՞ղ էին ծեծում իրենց զոհին: Ժողճակատի նախագահի առանձնասենյակում՝ Իսա Գամբարովի ներկայությամբ:

http://royallib.com/read/alizade–zardusht /konets–vtoroy–respubliki.html#532480

Ի՞նչ մթնոլորտ էր տիրում Ժողճակատում: Խնդրեմ. «Խոսքը տրամադրվեց Ալի Բայրամլի քաղաքից ինչ-որ մի բժշկի: Սույն բժիշկը հանդիսավոր հայտարարեց, որ ժամանակակից բժշկությունը արյան անալիզի միջոցով կարողանում է որոշել մարդու ազգային պատկանելությունը եւ առաջարկեց, որ Լեյլա Յունուսովան անալիզի համար արյուն հանձնի...»: Ինչո՞ւ: Որովհետեւ կասկածում էին, որ Յունուսովան հայ է... Որովհետեւ նրա ամուսնու՝ Արիֆ Յունուսովի մայրը հայուհի էր:

- Խնդրեմ, մեր ճակատը դարձավ ֆաշիստական կազմակերպություն, շուտով կսկ-



Ռասիմ Աղաեւ

թողնեն ամեն ինչ եւ փախչեն, բայց «այն ժամանակ, իրականացնելով Մութալիբովի տապալման իրենց ծրագրի վերջին փուլը, ԱԺՃ առաջնորդները նման հետեւանքների մասին չէին մտածում»:

Ահա, կարծես, ամեն ինչ ամբողջանում է. եթե սպանվածների ցուցադրումը Մութալիբովի տապալման ծրագրի վերջին փուլն էր, ինչպես Ալիզադեն եւ Աղաեւն են գրում, ապա նախավերջինը պետք է լիներ նրանց սպանությունը, իսկ դրան պետք է նախորդեր Խոջալուից խաղաղ բնակչության տարհանման դեմ ԱԺՃ սադրանքները... Այսպես կառուցվում է տրամաբանական շղթա, որի բոլոր օղակները տանում են դեպի ԱԺՃ-Մութալիբով քաղաքական մրցակցություն:

Խոջալուի խաղաղ բնակչության դեմ, այո, հանցագործություն է կատարվել, բայց դրա հեղինակները Բաքվում են: Շատերն այսօր էլ քաղաքականության մեջ են, զբաղեցնում են պետական, զինվորական եւ այլ բարձր պաշտոններ: Ապրում են նաեւ «Երկրորդ հանրապետության վախճանը» գրքի համահեղինակներ Զարդուշտ Ալիզադեն եւ Ռասիմ Աղաեւը: Ես վերջինիս դիմանկարը վերադարձրի՝ օգտագործելով իր իսկ գրքի որոշ հատվածներ: Եթե դրանք «կեղծ» են, ապա ինչո՞ւ են գրվել: Եթե ճշմարտությունն այն է, ինչ ասվել է 20 տարի առաջ Մոսկվայում, համարյա ընդհատակյա պայմաններում հրատարակված գրքում, ապա ինչո՞ւ է դրանից այսօր հրաժարվում Ռասիմ Աղաեւը...

# Խոջալու: Նորից ճշմարտությունը երեւան է հանվում

«Խոջալուի դեպքերի 25-ամյակի առթիվ YouTube-ով փետրվարի 12-ին ցուցադրված մի տեսաֆիլմ երեւան է հանում քարոզչության նպատակով Ադրբեջանի տարածած աղավաղված պատմությունները», գրում է **Կարեն Ղազարյանը** «Արմինյն Միրոր-Սպեքթեյթրում»:

Տեսաֆիլմը պատմում է զինվորական լրագրող Չինգիզ Մուսթաֆայեւի մասին, ով դեպքի վայր է հասնում ուղղաթիռով եւ նկարում գետնին պառկած դիակները, որոնց զինված մարդիկ քարշ էին տալիս: «Այդ մարդիկ հայեր չէին եւ տեսնելով լուսանկարչական ապարատս՝ փախուստի դիմեցին: Հաջորդ օրը նույն վայրը նկարելիս, նկատեցի, որ դիակները այլանդակված, խեղված էին: Նախորդ օրը նման բան չկար: Ես հասկացա, որ դա արվել էր դիտավորյալ, «միջազգային հանրության» համար», պատմում է նա:

Նրա երկու օրերի նկարահանած կադրերը ապացուցում էին, որ «կոտորածը» կազմակերպված էր Ադրբեջանի իշխանությունների կողմից, բանակի այսպես կոչված «ժողովրդական ճակատի» ներկայացուցիչների կողմից, ովքեր պայքարում էին այդ ժամանակվա նախագահ Այազ Մութալիբովի դեմ:

Աղճատված դիակները քարոզչական նպատակ էին հետապնդում:

Մուսթաֆայեւը մահացել է 1992-ի հունիսի 15-ին անհայտ հանգամանքներում: Ըստ պաշտոնական վարկածի, Նախիջեւանիկ գյուղի մոտ փոխհրաձգության ժամանակ նա մահացել է ականանետի կրակից: Բայց պարզ է, որ նրան պարզապես «լռեցրել» են պատահածի մասին ճիշտ տեղեկատվություն ունենալու պատճառով: Այդուհանդերձ նրան հաջողվել էր նկարահանած կադրերը ապահով վայրում թաքցնել:

Իշխանությունների ներքին պայքարի հետեւանքով կազմակերպված «կոտորածի» մասին խոստովանել է նաեւ Այազ Մութալիբովը:

Ըստ ֆիլմի ներածականը պատմողի, Մուսթաֆայեւի տեսաժապավենը հավելյալ փաստ է վավերական նյութերի այն մեծ փաթեթի, որը բացահայտում է ազերիների հորինած պատմությունները եւ պետք է օգտագործվի ըստ այդմ:

Հ. Ծ.



# Նոր կայքը բացահայտում է մի նոր Բալաքյանի գործունեությունը

Նրա անունը Ժիրայր (Ջերարդ) Բալաքյան է: Հայտնի է եղել անցյալ դարի 60-70-ական թվերին էներգալուծույթով հարուստ «Գատոր Էյդ» (Gator Ade) եւ «Սպորտէյդ» (Sportade) անվանումներով սպորտային, հատուկ մարզիկների համար նախատեսված զովացուցիչ ըմպելիքների իր գյուտերով:

Ստահոգված մարզիկների, հատկապես ֆուտբոլիստների շրջանում ջերմահարությունից առաջացած մահվան դեպքերի աճի տեմպերով, դոկտ. Բալաքյանը հորինում է ծարավը հագեցնող իզոտոնիկ ըմպելիքը, որին «Սպորտէյդ» անվանումն է տալիս: Այդ ժամանակ նա աշխատելիս է եղել Ինգլվուդի (Նյու Ջերսի) հիվանդանոցում եւ նախագահն է եղել թմրանյութերի հետազոտության կոմիտեի: Նրա խմիչքը վերականգնել է մարզիկների օրգանիզմում ֆիզիկական լարման հետեւանքով առաջացած նատրիումի եւ կալիումի պակասը:

1968-ին լիցենզավորումից հետո խմիչքը սենսացիա է առաջացրել եւ մամուլը (Նյու Յորք Թայմս, Նյուզուիք, Ուորլդ Թենիս Մեգեզին, Մեդիկալ Թայմս, եւայլն) մեծապես արձագանքել է դրան: Հրավիրվել է NBC հեռուստաընկերություն ելույթ ունենալու, հրատարակել է մի շարք հոդվածներ եւ հրավիրվել դասախոսություններ կարդալու համալսարաններում եւ բժշկական ֆորումներում: 1970-ին ելույթ է ունեցել Օքսֆորդի համալսարանում կազմակերպված Սպորտային բժշկության համաշխարհային կոնգրեսի նիստերում:

Ըմպելիքի առաջին օգտագործողներից են եղել «Նոթր Դամ», Սիրակուզա, Սթենֆորդ, Դորտմութ, Բաքնել եւ այլ ֆուտբոլային խմբերը: Սպորտէյդը թույլատրվել է օգտագործել նաեւ 1968 եւ 1969 թվերի օլիմպիական խաղերի ժամանակ: Այն նաեւ գրանցվել է օտար երկրներում, ինչպիսիք Կանադան է, Մեքսիկան, Հոնկոնգը, Ճապոնիան, Մալայզիան, Սինգապուրը եւ Թայլանդը:

Մանրամասնությունների համար այցելել «gerardbalakianmd.com» կայքը:

Հ. Ծ.

AZG NEW SHABAT 1.QXD 08/03/2017 21:53 Page 8



# Թուրքիան ու Գերմանիան՝ ոնց որ մաս ու եղունգ

⇨1 Պարտվածի հոգեբանության մասին եթե մենք մոռանանք, իրենք մասնավոր զրույցներում իհարկե կուղղորդեն՝ հիշողությունների սլաքը գրեթե զոհի կարգավիճակին մերձեցնելով, բայց այս երկրի ղեկավարները վաղուց են ընդունել՝ զոհն իրենք չեն, իսկ դահիճն անցյալի սեւագիրն է, դպրոցից սկսած գերմանացին իր պատմության մաքրագիր էջն է գրում:

Թուրքերի հանդեպ գերմանացիների թշնամանք չեմ նկատել, նույն լեզվով չեն խոսում, արտաքին ու մանավանդ ներքին տարբերություններն ակնհայտ են, բայց՝ անձրեւառատ այս երկրի ստամոքսը սիրում է աղալ նրանց՝ տարբեր ազգերից յուրացրած արեւառատ խոհանոցի բարիքները, իսկ դասական երաժշտության սիրահար ականջը երաժշտական բոլոր գործիքների ձայնն էլ ընդունում է, սազն ու զուռնան էլ, վիրավորանք, հայհոյանք էլ լինի ամբարում, չի հասցնում ուղեղ: Հարցրել եմ՝ ինչպե՞ս: Կիրթ ձեւակերպում են՝ արհամարհանքը լավագույն պատասխանն է: Սառը գլխով երկիր են կառավարում:

Թուրք քաղաքական գործիչների քարոզարշավային ելույթները չեղարկելու Գերմանիայի որոշմանն ի պատասխան Էրդողանը այն անվանեց նացիստական մեթոդ՝ շատ լավ կռահելով, թե իր նետած գուրզը որքան էլ ետ շպրտվի, այնուամենայնիվ բումերանգ չէ: Գերմանացի պաշտոնյաներից ով այս շաբաթ խոսեց, նույն նախաբանն էր կրկնում՝ նացիստական հղումը նույնիսկ մեկնաբանության արժանի չէ: Ասում են ու նորից շրջանառում՝ սա հարված է գոտկատեղից ներքեւ...

Մարտի 9-ի առավոտյան նիստում Բունդեսթագը ԵՄ գագաթաժողովին ընդառաջ ճշտեց Գերմանիայի եւ ԵՄ-ի պահանջը Թուրքիայից: Նախ Բունդեսթագի նախագահ Լամմերտը հստակ քննադատություն հնչեցրեց Թուրքիայի հասցեին, հատկապես շեշտելով Էրդողանի՝ Գերմանիային հասցրած գերագույն վիրավորանքը՝ նացիոնալ սոցիալիզմի անցյալը ներկայի վարքագիծ նկատելը: Նա, ով նման բան է ասում, իրեն է որակազրկում, բանաձեւեց Լամմերտը:

Հաջորդ բանախոսը՝ կանցլեր Մերկելը ներկայացրեց կառավարության տեսակետը՝ հիշեցնելով մեկնակետը՝ Գերմանիայի շահերից չի բխում ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիային իրենցից հեռացնելը, իսկ փախստականների հարցում Թուրքիայի հետ կնքած համաձայնագիրը բխում է ինչպես Գերմանիայի, այնպես էլ ԵՄ շահերից, չմոռանալ նաեւ իսլամիստական ուժերի դեմ համատեղ պայքարելու խոստումը, հետեւաբար՝ թուրք քաղաքական գործիչներին արտոնել օրենքի շրջանակներում ազատ արտահայտվել Գերմանիայում, բայց՝ նույնը ակնկալել նաեւ Թուրքիայում: Մերկելը հիշատակեց թուրքական բանտում գտնվող լրագրող Յուչելին՝ խոստանալով, թե Գերմանիայի կառավարությունն ամեն ինչ անելու է սատարելու իր լրագրողին:

Ձախերի խմբակցության ղեկավար, ընդդիմության առաջնորդ Դիիթմար Բարթշի պահանջը, որ հնչում է շաբաթներ արդեն, նույնն է՝ Ինջիռլիքից ետ կանչել գերմանական զինուժը, Թուրքիային զրկել զենքից, ինչպես 1992-ին Հելմուտ Քոհլի որոշմամբ եղավ, իսկ փախստականների ճգնաժամն հո երկնքից չընկա՞վ, 10 տարի կանցլերի պաշտոնում եք, պատասխանատվություն եք կրում, դիմեց նա Մերկելին, իր կուսակիցների ծափերին ավելացնելով Կանաչների զույգ ձեռքերի ուժը:

Սոցիալ դեմոկրատների խմբակցության ղեկավար Թոմաս Օփփերմանն էլ իր կուսակից ընկերոջ՝ արտգործնախարար Զիգմար Գաբրիելի նման կողմ արտահայտվեց էսկալացիայի թուլացմանը: «Իսկ էմոցիաների էսկալացիայից ամենաշատը կտուժեն այն թուրքերը, որ Գերմանիայում են ապրում», ասաց Օփփերմանը՝ չմոռանալով երեւի, որ իր երկրի ընտրողն էլ աշնանը քվեատուփի առջեւ է կանգնելու: Նա այս հեռատեսությամբ, բնական է, միակը չմնաց ելույթ ունեցողների շրջանում: Դաշինք 90/ Կանաչներ կուսակցության նախագահ Ջեմ Էօզդեմիրը հիշեցրեց, թե ոչ վաղ անցյալում, երբ իրենք էին սոցիալ դեմոկրատների հետ կոալիցիա կազմած ղեկավարում ԳԴՀ, Թուրքիան բարեփոխումների ուղին էր ընտրել:



Օրեր առաջ Եվրոմիության ընդլայնման հարցերի նախկին հանձնակատար, գերմանացի սոցիալ դեմոկրատ Գյունտեր Ֆերհոյգենն էլ իր ելույթում բացառիկ կտրուկ եղավ՝ ԵՄ-ն էլ մեղավոր է: 1999-ին Թուրքիան պաշտոնապես ԵՄ լիիրավ անդամակցության թեկնածու էր: 60 տարի խոստացել, չենք կատարել, Թուրքիային առիթ տալով մաղձ կուտակել: 2005-ից ի վեր Թուրքիային ԵՄ արտոնյալ կարգավիճակ տրամադրելը նրան դուրս բերեց մեր վերահսկողությունից, դեմոկրատիայի ուղուց շեղվելն այդտեղ որոնեք: Էրդողանին կառավարելի դարձնելու լծակն ենք կորցրել, մեկնաբանեց Ֆերհոյգենը:

Բունդեսթագի երեկվա նիստում քրիստոնյա դեմոկրատական քրիստոնյա սոցիալիստական միության խմբակցության ղեկավար Ֆոլքեր Քաուդերն ամփոփեց՝ մենք միշտ նույն գիծն ենք որդեգրել՝ արտոնյալ կարգավիճակ եւ, ի պատասխան Էօզդեմիրի հնչեցրած «բարեփոխումների», հավելեց՝ քրիստոնյաների վիճակն էական փոփոխություն չի կրել: Թուրքիայի կառավարությունը ազատությունների մասին խոսելիս լիքը բերանով չպիտի վրա տա, քանի դեռ իր երկրում չի խոսում հիմնարար՝ կրոնական ազատության մասին: Էրդողանն ասում է՝ ուզում եմ Գերմանիա գալ, կգամ ու կխոսեմ: Կարող եք գալ, բայց մենք էլ պիտի գանք ու պահանջենք՝ Ինջիռլիք ենք ուզում գնալ, ասաց Քաուդերը՝ հավելելով, թե տուրիզմի նահանջ արձանագրող երկրի ղեկավարը պիտի խորհի՝ սրանից հետո ո՞վ կուզենա այդ երկիր այցելել: Ուղիղ եթերում երեւաց Անգելա Մերկելը, որի դեմքին հավանության արտահայտություն էր:

Ըստ «Ռայնիշե փոստ» թերթի՝ գերմանա- թուրքական լարված հարաբերությունների վերաբերյալ 136.950 մասնակից ներառած հարցման, չորեքշաբթի՝ մարտի 8-ին, 82 տոկոսն այն կարծիքն է հայտնել, թե գերմանա-թուրքական հարաբերությունները երբեւէ այսքան լարված չեն եղել: Մարտի 7-ին արձանագրել եմ՝ 85 տոկոսն էր նույն համոզման: Ուրեմն՝ տարիների փորձով չեմ սխալվել՝ նվազման միտում կա: Չեն մոռանա, բայց ավելի շատ կհիշեն, որ նույն ճամբարում են՝ ՆԱՏՕ-ի կազմում, մանավանդ այն հեռանկարով, որ մոտենում է ԱՄՆ նորընտիր նախագահի Թրամփի եւ Անգելա Մերկելի առաջին հանդիպումը, որ արծարծելու է Հյուսիսատլանտյան դաշինքի նոր մարտավարությունը:

Իսկ Զիգմար Գաբրիելն երեկ Լավրովի հետ Մոսկվայում կայացած հանդիպումից հետո կարծես վերընդգծեց Ռուսաստանի հետ իրենց տարբերությունները:

Բայց՝ խոսենք թուրք-գերմանական առճակատման կարեւոր մանրամասներից, որտեղ, բոլորն են կրկնում, թաքված շան գլուխներ են երեւում: Երկուշաբթի օրը՝ մարտի 6-ին, Չավուշօղլուի Համբուրգում նախատեսված ելույթը չկայացավ: Թուրքական հարսանիքների ու տոնախմբությունների համար նախատեսված մեծ սրահում ապահովված չէր հակահրդեհային համակարգի պատշաճ որակ: Նախարարը երեքշաբթի ելույթ ունեցավ՝ հյուպատոսարանի բակում հավաքված մոտ 200- 300 հայրենակցի առջեւ: Գերմանիայի տարբեր քաղաքներում տեղական պաշտոնյաների որոշմամբ թուրք քաղաքական գործիչների քարոզարշավային ելույթները չեղարկվելուն զուգահեռ Անկարան օր օրի սաստկացրեց վերբալ էսկալացիան: Թուրքիայի ԵՄ անդամակցության բանակցությունները պիտի՞ դադարեցվեն «Դի ցայթի» հարցմանն ի պատասխան մարտի 8-ի երեկոյան 86 տոկոսը դրական պատասխան է տվել: Նույն թերթի թղթակից Սեբաստիան Կեմփկենսը մանրամասն շարադրել է, թե ինչպես է Համբուրգի հյուպատոսարանի բակում Չավուշօղլուի ելույթի ժամանակ թուրքերի հարձակմանը ենթարկվել, զրկվել ակնոցից, երբ առաջին անգամ որոշել է խախտել լրագրության՝ չեզոք լինելու օրենքը՝ գործընկերոջ հանդեպ համերաշխություն արտահայտելը գերակայելով: Վերցրել է մի պաստառ, շրջել ու գրել՝ «Free Deniz» (ազատություն Դենիզին): Համերաշխություն Գերմանիայում ծնված թուրք այն լրագրողին, որ երկու քաղաքացիություն ունենալով, հիմա Սիլիվրի բանտում է, եւ որի ազատ արձակումը դարձել է եվրոպական մի շարք երկրներում հանրային պահանջ: Մինչ այդ հենց նրա գրառմամբ թուրքերից մեկի՝ սահմանադրական հանրաքվեի օգտին քարոզչության մի բացատրություն: 10 տարի դեռ կպահանջվի, որ Թուրքիան արտոնի իրեն իրական դեմոկրատական ուղի բռնել, Էրդողանն իշխանություն է ուզում, որ երկիրն ուժեղացնի, ասել է գերմանաբնակ թուրք ընտրողը: Մեր գործընկերը շատ տպավորիչ է պատկերում Չավուշօղլուի պահվածքը՝ սկզբում դեմոկրատ էր ներկայանում, հետո... «Գերմանիա, թուրքական քաղաքականությանը մի՛ խառնվիր: Գերմանիան ակնհայտ վախ ունի, որ Թուրքիան կհզորանա, երբ հանրաքվեին «այո»-ն հաղթի: Գերմանիան անընդհատ դեմ է կանգնում Թուրքիային, ճնշում գերմանաբնակ թուրքերին»: Ինչ հիշում եմ՝ սա թուրքերի՝ հատկապես քարոզարշավային հռետորական հնարք է, որ լավ էլ արձագանք է գտնում գերմանաբնակ թուրքերի շրջանում: Հետո, ինչպես մեր գործընկերն է նկարագրում՝ «Էրդողան» վանկարկմանը զուգահեռ ձեռքերն են վեր պարզվում՝ մատների հպումով գորշ գայլերի նշանը ցուցադրում: Կողքին կանգնած կինը նկատում է գերմանացի լրագրողի պաստառը ու գոռում՝ «սադրիչ է»: Մեկն արագ պատռում է գրությունը, Թուրքիայի դրոշը գրկած մյուսները հարձակվում են հետեւից, մի մարդ հրում է՝ «դու՛րս այստեղից», վերից, վարից, աջից, ձախից հարվածներ: «Շնորհակալ եղիր Էրդողանի մարդկայնությանը, որ դեռ ապրում ես», ասում է մեկը:

Մարտի 8-ին Բեռլինում այդուհանդերձ կայացավ Գերմանիայի եւ Թուրքիայի արտգործնախարարների հանդիպումը, բայց լարվածությունը չթուլացրեց: ԳԴՀ արտգործնախարարը «Ադլոն» հյուրանոցում հանդիպեց Թուրքիայի իր պաշտոնակցին: 90 րոպե տեւած հանդիպում-նախաճաշից հետո պաշտոնյաների համատեղ մամլո ասուլիս չեղավ: Զիգմար Գաբրիելը լրագրողների հարցերին պատասխանեց արտգործնախարարության շենքում:

Չավուշօղլուն առիթ ունեցավ իր տեսակետները փոխանցել Բեռլինում մեկնարկած Զբոսաշրջության միջազգային ամենամյա տոնավաճառում, որտեղ Թուրքիան բազմաթիվ տուրիստական ընկերությունների գրավիչ փաթեթներով փորձում է գերմանացիներին համոզել, թե հենց իրենց լողափերի արեւն ու ավազն են շոյում ու կոփում առողջ մարմիններ: Տարվա մեջ 4 անգամ արձակուրդի մեկնող գերմանացիները, երկրորդ տարին է, որ նախապատվությունը տալիս են հունական եւ իսպանական լողափերին: Չավուշօղլուն հենց այստեղ է լավ տրամադրություն ունեցել, պաղպաղակ վայելել՝ ներսի դառնության վրա քաղցր լցնելով, բայց լրագրողի հարցը նրան խանգարել է՝ ի՞նչ կասի գերմանացի զբոսաշրջիկին արտգործնախարարը, որ ահաբեկչության երկյուղի պատճառով իր երկիր չի գնում, կամ՝ լրագրողներին, որոնց համար Թուրքիայում վտանգավոր է: Չավուշօղլուի պատասխանը ես էլ անգլերեն գրեմ՝ գերմանական մամուլին հավասարիմ՝ Bullshit, որ անշուշտ հայերեն թարգմանություն ունի, բայց...արժե՞ որ թարգմանվի՝ մանավանդ Հայաստանում մեկնարկած ընտրարշավային մեր բառամթերքում այն կարծես լավ էլ ներմուծվեց՝ Սերգեյ Դանիելյանի շրջանառությամբ:

Բեռլինի ամենամյա զբոսաշրջության տոնավաճառում ոչ մի երկիր այդքան՝ 50-ից ավելի մասնակից չունի: Բայց ժպիտի առիթ չունեն տաղավարների մասնակից թուրք զբոսավարները: Թուրքիայում տեղի ունեցած ահաբեկչությունները ու քաղաքական ճգնաժամը նրանց բիզնեսն անկման են հասցրել՝ վանելով հատկապես Գերմանիայի եւ Ռուսաստանի քաղաքացիներին: 2016-ին 25 միլիոն զբոսաշրջիկ է այցելել արտերկրից, որ 10 միլիոնով պակաս է նախորդ տարվա համեմատ: Հյուրանոցատերերը 2017-ին էլ աճ չեն ակնկալում: Արձակուրդային հասցե է Չավուշօղլուի ծննդավայր Ալանիան, ուրեմն նա հաստատ գիտի, որ իր երկրին գերմանացու այցն է նաեւ շնչառություն տալիս: Բայց նրա ելույթը զբոսաշրջության աճին դժվար թե օգնի, ԳԴՀ-ում քաղաքական ամբիոն չգտնելով, հենց այս հարթակից կոչ է անում՝ Գերմանիա՛, որոշի՛ր Թուրքիան բարեկա՞մ է, թե՞ թշնամի: Թուրքիայի համար հիմք չկա Գերմանիան թշնամի համարել: Նախագահական համակարգի ընդդիմադիրների սահմանադրական հանրաքվեի դեմ գործունեությանը Գերմանիայում չեն խոչընդոտում, կողմնակիցներինը՝ իհարկե, նկատել է տվել Թուրքիայի արտգործնախարարը: «Գերմանացիների հետ խնդիր չունենք, քաղաքական գործիչներն են վիճում», ասում են զբոսաշրջության բիզնեսով զբաղվող թուրք գործարարները: «Մեր ցանկությունը մեկն է՝ վիճակը շուտ բարելավվի, չէ՞ որ Թուրքիան ու Գերմանիան ոնց որ մաս ու եղունգ լինեն, ո՞նց բաժանես»:

Եղունգը սեւանում, թարախակալում, նորից աճում է, երբ մարմնի բջիջները դեռ չեն քայքայվել կամ էլ՝ լավ բժշկի հսկողության տակ են: Գերմանիան հենց այդ բժիշկն է փորձում լինել:

Ի դեպ Նիդեռլանդներում, Շվեյցարիայում էլ Չավուշօղլուի առաջիկա օրերին նախատեսված քարոզարշավը դիմադրության է հանդիպում: Ռոտերդամում մերժել են շաբաթավերջին ամբիոն տրամադրել: Նրա Ցյուրիխ այցելելու, թուրք ընտրազանգվածի հետ հանդիպման ցանկությունն էլ չի իրականանում: Տեղական պաշտոնյաները հրաժարվում են առաջիկա կիրակի երաշխավորել թուրք արտգործնախարարի անվտանգությունը: Բեռնի պաշտոնական օրակարգում Չավուշօղլուի հետ որեւէ հանդիպում նախատեսված չէ:

AZG NEW SHABAT 1.QXD 08/03/2017 21:53 Page 9



# The National Interest. Ղրիմն Ուկրաինային վերադարձնելու պահանջը ամերիկյան երեսպաշտության օրինակ է

## *ԱՄՆ-ի եւ իր դաշնակիցների տարածքային վերաձեւումների մասին*

Ղրիմն Ուկրաինային վերադարձնելու վերաբերյալ Ռուսաստանին Արեւմուտքի եւ առաջին հերթին ԱՄՆ-ի ներկայացրած պահանջը արեւմտյան երկրների աղաղակող երեսպաշտության եւ երկակի չափանիշների օրինակ է, երկրներ, որոնք իրենք էլ ակտիվորեն զբաղվել են ուրիշ պետությունների սահմանների բռնի փոփոխումներով, գրում է **Թեդ Գալեն Կարպենտերը** ամերիկյան The National Interest թերթում:

Հեղինակը ընդգծում է, որ Դոնալդ Թրամփի վարչակազմը Ղրիմի հարցում շարունակում է իրեն նախորդած Բարաք Օբամայի քաղաքականությունը: Այսպես, ՄԱԿ-ում ԱՄՆ դեսպան **Նիկկի Հեյլին** փետրվարի 2-ին իր ելույթում նշեց, որ ԱՄՆ-ը մտադիր է ուժի մեջ թողնել Ռուսաստանի դեմ ուղղված պատժամիջոցները, քանի դեռ Մոսկվան չի վերադարձրել թերակղզին Ուկրաինային:



Փետրվարի 21-ին ՄԱԿ-ի ԱԽ-ում նա պարզորոշ կերպով հաստատեց իր դիրքորոշումը, հայտարարելով, թե «Ղրիմը Ուկրաինայի մասն է»:

Ղրիմի հարցում ԱՄՆ-ի բռնած դիրքը հար եւ նման է նախորդ վարչակազմի ուղեգծին, ինչպես նաեւ Թրամփի նահանջն է իրատեսական արտաքին քաղաքականությունից եւ ապացույցը վաղեմի խնդրի՝ աղաղակող երկակի չափանիշներ կիրառելու ԱՄՆ-ի պատրաստակամության:

Տասնամյակներ շարունակ ամերիկացի բազմաթիվ պաշտոնական անձինք պնդել են, որ պատերազմի միջոցով ձեռք բերված տարածքային փոփոխություններն անօրինական են, եւ որ Վաշինգտոնը չի հանդուրժի նման գործողություններ: Ղրիմը այդ դիրքորոշման լոկ ամենավերջին օրինակն է: Մասնավորապես այդ տրամաբանությանը հետեւելով Ջորջ Բուշ ավագը ներխուժեց Քուվեյթը զավթած Իրաք:

Այդուհանդերձ իր դաշնակիցների համանման վարքագծի նկատմամբ Վաշինգտոնի դիրքորոշումը արմատապես տարբեր է: «Կարելի է հարց տալ, թե ԱՄՆ-ը Իսրայելից ե՞րբ կպահանջի Սիրիային վերադարձնել Վեցօրյա պատերազմի ընթացքում իր զավթած Գոլանի բարձունքները», շարունակում է թերթը, մեջբերելով Թել-Ավիվի այն պատճառաբանությունը, թե Իսրայելն այդ հակամարտությունն սկսեց որպես կանխիչ միջոց, քանի որ Սիրիան ու Եգիպտոսը կարծես թե պատրաստվում էին հարվածել հրեական պետությանը: Իսրայելը հիմքեր ուներ գրավելու բարձունքները, որտեղից սիրիական հրետանին սպառնում էր հրեական բնակավայրերին:

Եվ այդուհանդերձ դա ռազմական ուժի միջոցով տարածքային փոփոխությունների իրականացման անվիճարկելի փաստ է, իսկ հետագայում այդ տարածքի բռնակցումը վկայում է, որ Թել-Ավիվը այն երբեք չի վերադարձնելու Դամասկոսին: Սակայն Վաշինգտոնը այդպես էլ պատժամիջոցներ չձեռնարկեց Իսրայելի դեմ: Ընդհակառակը, հետագա տարիներին երկկողմ հարաբերությունները միայն ամրապնդվեցին:

Նույնպիսի աղաղակող երկակի չափանիշներ գոյություն ունեն նաեւ 1974 թ. Թուրքիայի կողմից Կիպրոսի հյուսիսային մասի զավթման նկատմամբ Վաշինգտոնի դիրքորոշման մեջ: Տվյալ դեպքում ներխուժման համար նույնիսկ անվտանգության ապահովման անհրաժեշտության հիմնավորում չի եղել: Թուրքիբան այն ժամանակ կղզու թուրք բնակիչների նկատմամբ հույն կիպրացիների բռնության առանձին դեպքերն օգտագործեց որպես Կիպրոսի տարածքի 37 տոկոսի օկուպացման արդարացում: Թեեւ ԱՄՆ-ը այդ նախահարձակման համար սկզբում Թուրքիայի նկատմամբ աննշան պատժամիջոցներ ձեռնարկեց, դրանք շուտով չեղարկվեցին ու մոռացվեցին, իսկ Անկարան ստեղծեց այսպես կոչված «Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության» խամաճիկային կառավարություն:

Հարկավոր է նաեւ հարց տալ՝ Ղրիմում Ռուսաստանի գործողությունները վերոհիշյալ դրվագներից որքանո՞վ էին վատթար, որ Մոսկվան ենթակա դարձավ պատժամիջոցների: Ղրիմի հետ կապված իրավիճակը թեեւ այնքան սուր չէր, որքան Գոլանի բարձունքների դեպքում, բայց թերակղզու միացումն ուներ անհամեմատ մեծ նշանակություն: Կիեւում մոլի հակառուսական վարչակարգի իշխանության գլուխ անցնելուց հետո Կրեմլը բոլոր հիմքերն ուներ իր ծովուժի սեւաստոպոլյան ռազմակայանի ապագայով մտահոգվելու համար:

Ավելին, Ռուսաստանն ընդգծում է, որ Ղրիմը երկրի մասն է եղել 1780-ականներից մինչեւ 1954 թվականը, երբ Նիկիտա Խրուշչովը թերակղզու վերահսկողությունը հանձնեց Ուկրաինային: Հոդվածագիրը հարց է տալիս, թե ԱՄՆ-ում պաշտոնական անձինք եւ քաղաքական գործիչները ինչո՞ւ են այդպիսի ակնածանքով վերաբերվում «փլուզված երկրի կոմունիստ բռնապետի արածին»:

Վերջապես, ԱՄՆ-ը եւ ՆԱՏՕ-ի գծով նրա դաշնակիցները իրենք եւս հայտնի են տարածքային բռնի փոփոխություններով: 1999 թվականին ՆԱՏՕ-ն 70 օր շարունակ ռմբակոծում էր Սերբիան, որպեսզի այդ երկրից անջատի Կոսովոն, իսկ 2008 թվականին ԱՄՆ-ը եւ իր դաշնակիցները, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին զանց առնելով՝ հայտարարեցին վերջինիս անկախացման մասին: Դրանով իսկ ի հայտ եկած նախադեպը նույն թվականին Ռուսաստանն օգտագործեց Վրաստանի դեմ իր պատերազմում:

Եթե հաշվի առնենք երկակի չափանիշների կիրառման բազմաթիվ դեպքերը, ապա տարածքային փոփոխությունների նկատմամբ Վաշինգտոնի հռչակած քաղաքականության բարոյական հիմքը դառնում է ավելի ու ավելի խախուտ: Ուստի, գործնական տեսակետից, Ղրիմի նկատմամբ ԱՄՆ-ի ներկայիս անզիջում դիրքորոշումը այնքան էլ հիմնավորված չէ: ԱՄՆ-ի ղեկավարները պետք է ընդունեն այն իրողությունը, որ Մոսկվան չի հրաժարվելու Ղրիմից, ինչպես որ Սերբիան եւ Սիրիան չեն կարողանում հրաժարվել Կոսովոյից եւ Գոլանի բարձունքներից: Իր հերթին Կիպրոսը, չնայած պարբերաբար անցկացվող բանակցություններին, դժվար թե կարողանա կրկին իր վերահսկողության տակ առնել կղզու հյուսիսային մասը:

Այսպիսով, ԱՄՆ-ը բնավ չի շահում այն բանից, որ համառորեն եւ ապարդյուն կերպով Ռուսաստանից պահանջում է Ուկրաինային վերադարձնել Ղրիմը: Ամերիկյան թերթի բնորոշման համաձայն, արեւմտյան տերությունների, այդ թվում ԱՄՆ-ի, տարածքային զավթումների նկատմամբ Վաշինգտոնի երեսպաշտական քաղաքականության պատճառով ԱՄՆ-ի դիրքորոշումը դառնում է նույնիսկ ավելի զզվելի:

**Պ. Ք.**

# Չեն ծառայելու

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հայտարարել է, որ Ծառուկյան դաշինքի առաջնորդ Գագիկ Ծառուկյանը օրենք է խախտել: Խոսքը Ընտրական օրենսգրքի մասին է, որն ըստ ԿԸՀ-ի՝ պարոն Ծառուկյանը խախտել է անցած օրերին Տավուշի մարզում իրականացրած քարոզչության ժամանակ: Բանն այն է, որ պարոն Ծառուկյանը ոչ միայն խոսք է տվել իր հետ հանդիպման եկած տավուշցիներին, որ օգնելու է, այլ խոստացել է, որ հաջորդ օրն իսկ նրանց հարցերը կլուծվեն: Օրինակ, մեկին պետք է եղել վիրահատություն, պարոն Ծառուկյանը խոստացել է, որ վաղը կարող է գալ իր մոտ, իր մոտից էլ ուղիղ վիրահատարան: Մինչդեռ Ընտրական օրենսգրքում կարդում ենք, որ նախընտրական քարոզչության ժամանակ դրան մասնակից կուսակցություններին արգելվում է ընտրողներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով տալ կամ խոստանալ դրամ, սննդամթերք, ապրանք: Արգելվում է նաեւ մատուցել եւ խոստանալ ծառայություններ: Հիմա, պարոն Ծառուկյանն իհարկե կարող է ասել, որ ինքը ԸՕ-ի հիշյալ դրույթը չի խախտել, քանի որ այն կուսակցությունների մասին է, իսկ իրենը՝ դաշինք է, այն էլ՝ հուժկու, բայց Ծառուկյան դաշինքից այս կապակցությամբ հանդես եկած Իվետա Տոնոյանը նշել է, որ պարոն Ծառուկյանի մարդկային վերաբերմունքը ոչ մի աղերս չունի «ընտրակաշառք» ձեւակերպման հետ:

Ամեն դեպքում, անկախ նրանից, թե պարոն Ծառուկյանի մարդկային վերաբերմունքը որքանով աղերս ունի, կամ ունի՞ արդյոք ընտրակաշառքի հետ, փաստ է, որ այս նկատողությունից հետո Ծառուկյան դաշինքի առաջնորդը որոշակիորեն փոխել է իր մարտավարությունը: Օրինակ, Տավուշից հետո Արմավիրի մարզում պարոն Ծառուկյանը ոչ մեկի հարցը տեղում չի լուծում եւ դա վաղն անելու խոստում չի տալիս, այլ միայն նշել է, որ բոլոր հարցերը ընտրություններից հետո կլուծվեն:

Այնուամենայնիվ, ո՞րն է մարդկային վերաբերմունքի եւ ընտրակաշառքի սահմանագիծը: Ավելի ճիշտ՝ ինչո՞վ է տարբերվում նախընտրական խոստումը՝ ընտրակաշառքից: Տեսեք, եթե նախընտրական հանդիպումների ժամանակ ընտրություններին մասնակցող որեւէ կուսակցության դիմելով՝ քաղաքացին խնդրում է լուծել իր մասնավոր հարցը, օրինակ՝ սառնարան չունի, եւ տվյալ կուսակցությունը խոստանում է հենց վաղը լուծել այդ հարցը, կամ հենց տեղում, կուսակցական ավտոբուսից հանում տալիս է քաղաքացուն նոր սառնարան, սա ընտրակաշա՞ռք է: Ենթադրենք՝ է, իսկ ինչո՞ւ այդ պարագայում ընտրակաշառք չէ կուսակցությունների նախընտրական խոստումն առհասարակ, մանավանդ որ դրանք հենց սառնարանային թեմայով են, քանի որ ընտրություններին մասնակից բոլոր կուսակցությունները մեզ խոստանում են, որ իրենց ընտրելու պարագայում, մեր սառնարանները լցվելու են, ոչ ամբողջությամբ եւ միանգամից, բայց սկզբում՝ տասը տոկոսով, հետո կայուն եւ շարունակաբար: Հիմա, ո՞րն է խնդիրը, եթե կուսակցություններից մեկը նույն պահին ե՛ւ խոստում տալիս, ե՛ւ հարց լուծում, իսկ մյուսը միայն խոստում է տալիս, հետո կամ կլուծի՞, կամ՝ ինչպես միշտ: Խոստումն ինքը ընտրակաշառք չէ՞, թեկուզ եթե այն վերաբերում է ոչ թե մեր սառնարաններին, այլ, ենթադրենք, Գեղարքունիքի մարզում բարձրագույնավարտ երիտասարդների՝ նվազող թիվը բարձրացնելուն:

Բացի այս, ի՞նչ է նշանակում քարոզարշավի ժամանակ ընտրություններին մասնակցող կուսակցությունների՝ քաղաքացիներին ծառայություններ խոստանալու արգելքը: Այսինքն ընտրարշավի մասնակից կուսակցությունները չպե՞տք է խոստանան, որ ծառայելու են քաղաքացիներին: Չէ, հասկանալի է, որ ընտրություններից հետո չեն ծառայելու, բայց խոստանալն է՞լ չի կարելի: Եթե ոչ, ապա ինչո՞ւ է, օրինակ, իշխող Հանրապետական կուսակցությունը ընտրություններին մասնակցում «Անվտանգություն եւ Առաջընթաց» կարգախոսով, չէ՞ որ ե՛ւ առաջինը, ե՛ւ երկրորդը ըստ էության ծառայություններ են, որոնք, ըստ ԸՕ-ի, խոստանալ չի կարելի:

Մի խոսքով, բոլոր այն կուսակցությունները, որոնք ձեզ հետ կգան հանդիպելու այս մեկ ամսվա ընթացքում եւ կխոստանան, որ ծառայելու են ձեզ, անմիջապես դիմեք համապատասխան մարմիններին, քանի որ նրանք այդպիսով օրենք են խախտում: Մյուս կողմից, սակայն, պարզվում է, որ մեր Ընտրական օրենսգիրքը շատ էլ լավն է, քանի որ ընտրություններին մասնակցող կուսակցություններից պահանջում է անկեղծություն, անգամ՝ պարտադրում է, որ անկեղծ լինեն. եթե չեք ծառայելու, ինչո՞ւ եք խոսք տալիս:

Մի կարեւոր բան էլ. բարեգործությունը, այն էլ ընտրությունների ժամանակ, հաճախ մարդկայինի հետ որեւէ աղերս չունի:

**ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ**

# Սրտաբանի զգայուն սիրտը

ՌՈԶԱ ՔԱՐԱՄՅԱՆ

*Երբ առողջության հետ կապված խնդիրներ չենք ունենում, մենք, որպես կանոն, դրա մասին չենք հիշում եւ շրջանցում ենք բժիշկներին: Բայց հենց որ ինչ-որ տեղում ծակոց կամ ցավ ենք զգում, անմիջապես սկսում ենք ջղաձգորեն փնտրել լավագույն բժշկին: Երեւանում այսօր գործում են հսկայական թվով բուժկենտրոններ: Բայց այցելուները ինչպե՞ս գնահատեն դրանց աշխատանքը: Ինչպե՞ս ընտրեն լավագույն կլինիկան եւ գտնեն իրենց բժշկին: Այս հարցերին պատասխանելու համար հարկավոր է զգալ եւ ըմբռնել օվկիանոսի մեծությունը, այն տեսնել բաց տարածության մեջ, երբ շուրջդ չկա ոչինչ, բացի հզոր տարերքից, որը մշտապես կենդանի է, մշտապես շարժման մեջ: Դրա նմանությամբ չափվում է նաեւ տաղանդավոր մասնագետի հրաշագործ ուժը: Դրա մասին չի կարելի դատել ըստ մերձավորների մանր հուշերի, քննադատների անհեռատես գնահատականների, ընկերների աչառու եւ հաճախ հիմար պատմությունների: Իմ հոդվածը պարապ հնարանքի արգասիք չէ: Իմ նկարագրած ամեն ինչը համապատասխանում է իրականությանը:*

**Համլետ Գրիգորի Հայրապետյան**- բժշկական գիտությունների դոկտոր, ԵՊԲՀ սրտաբանության ամբիոնի պրոֆեսոր, «Էրեբունի» սրտաբանական կենտրոնի ղեկավար, ՀՀ ԱՆ գլխավոր սրտաբան: Նրա աշխատանքը գնահատված է հետեւյալ պարգեւներով. «ՀՀ առողջապահության նախարարի պատվոգիր», «ՀՀ Ազգային ժողովի նախագահի պատվոգիր», «Մխիթար Հերացի» մեդալ, «Ֆ. Նանսենի անվան ոսկե մեդալ», «ՀՀ առողջապահության նախարարության ոսկե մեդալ»: Նա հպարտանում է եւ բարձր է գնահատում այդ կառավարական պարգեւները, բայց իր համար ամենակարեւոր պարգեւը համարում է հիվանդների երախտագիտությունը եւ իր փրկած կյանքերը: Նրան չես անվանի ճակատագրի սիրեցյալ: Տարիներ շարունակ նրա անդուլ աշխատանքի ականատեսը եղած անձանցից ոչ մեկը չի կարող ժխտել, որ նա արժանի է այդ պարգեւներին, ինչպես ասում են գործընկերները, «նա վաստակել է դրանք»: Նա տիրապետում է այն բանի, թե ինչ կարող է անել եւ ինչպիսի բարձունքների կարող է հասնել մարդը աշխատասիրության, ողջախոհության, ազնվության շնորհիվ:

Հայրապետյանի մասին արտահայտվում են որպես լրջմիտ, ուշադիր, խորաթափանց բժշկի: Ասենք զարմանալի ոչինչ չկա, եթե նրա կատարած ախտորոշումը առավել կատարյալ եւ խորը լինի որեւէ նշանավոր անձի կատարած ախտորոշումից: 2003 թվականին նա կատարելագործվել է Մոսկվայի Բակուլեւի անվան գիտական կենտրոնում, իսկ 2007-2008 թթ.՝ Փարիզի «Ժորժ Պոմպիդու» Եվրոպական հոսպիտալում: Նա հիվանդի դեմքի վրա, ձայնի, քայլվածքի մեջ տեսնում եւ լսում է այն, ինչը անմատչելի է ուրիշներին, չի երեւում, խույս է տալիս միջակ դիտորդի աչքից: Նա խորապես հասկանում է մարդկանց, սրությամբ զգում նրանց տագնապները, տառապանքները: Նա այդպես էլ չի սովորի անտարբեր նայել մարդկանց վշտին ու ցավին, հաստատորեն ու խորապես հավատում է բժշկությանը, եւ ոչինչ չի կարող սասանել այդ հավատը: Հանրապետության բոլոր ծայրերից նրան մշտապես դիմում են խորհրդի եւ օգնության համար, գալիս են իրենց վշտերով ու հոգսերով, եւ նա իր մեջ բավականաչափ համբերություն, ժամանակ եւ սեր է գտնում մարդու հանդեպ, որպեսզի հասկանա ուրիշի ցավը, մխիթարի, հանգստացնի, գոտեպնդի: Նա բարի է եւ շռայլ, մեծահոգի եւ կարեկից, բարյացակամ, սիրալիր եւ հարգալից: Նրա մեջ ինձ ապշեցնում է վեհերոտության եւ ինքնավստահության հետաքրքրական խառնուրդը: Եվ շրջապատողների համար միշտ անհասկանալի մնացող այդ գծերի մեջ թերեւս թաքնված է նրա անհատականության գլխավոր գաղտնիքը:



Նա չի սիրում խոսել իր մասին, բարկանում է, երբ իրեն հարցուփորձ են անում, շատ համեստ է, լռակյաց, միշտ զուսպ է, կատակում է, բայց՝ շատ մոտիկ շրջապատում: Առհասարակ ես Համլետ Հայրապետյանից ավելի լռակյաց մարդու չեմ ճանաչում եւ կարծում եմ, որ նրա սակավախոսությունը բխում է ինչպես մտահավաքությունից եւ ուժեղ ու զգուշավոր բնավորությունից, այնպես էլ բժշկի երկարամյա աշխատանքից: Սակայն նրա լռակյացությունը մտերմական է ու հանգստավետ, իսկ աշխատասիրությունը՝ ապշեցուցիչ: Թվում է՝ նրա ներսում ապրում է իրեն աշխատանքով ծանրաբեռնելու ինչ-որ անհագուրդ պահանջմունք:

1995 թ. նա թեկնածուական թեզ պաշտպանեց «Սրտամկանի անցավ իշեմիայի կլինիկական եւ կանխատեսական նշանակությունը վաղ հետինֆարկտային շրջանում» թեմայով, իսկ 2014-ին՝ դոկտորական թեզ «Աջ փորոքի վնասվածքի նշանակությունը կլինիկական ընթացքի, ձախ փորոքի ստորին տեղայնացման սրտամկանի սուր ինֆարկտի դեպքում հիվանդության մերձավոր ու հեռավոր կանխատեսումների տեսակետից. էխոսրտագրական կանխատեսիչների մշակում» թեմայով: Նա գրել եւ հրապարակել է 100 հոդված եւ ամփոփագիր, Գերմանիայում անգլերեն լույս տեսած մեկ մենագրություն:

Որպես իսկական աշխատավոր նա չի հանդուրժում պարապ շատախոսությունը եւ բարձր է գնահատում գործի ժամանակը: Ուստի հիվանդների կամ նրանց հարազատների հետ իր խոսակցությունները աչքի են ընկնում հակիրճությամբ: Նրա մշտական անհանգստության ու մտահոգության երկու առարկաներն են աշխատանքը եւ ընտանիքը, որոնց նվիրված է ամբողջ հոգով: Ինձ թվում է՝ հանուն աշխատանքի եւ ընտանիքի ապրող մարդը մեր ժամանակներում հազվագյուտ երեւույթ է: Երբեմն սաստիկ հոգնածությունը քիչ է մնում գետին տապալի նրան, բայց նա համբերատար կերպով պայքարում է իր այցելուների հիվանդության դեմ:

Ինձ մշտապես հիացնում է նրա բնականությունը, անբռնազբոս կերպով, առանց ընտանեվարության յուրաքանչյուր հիվանդի խնդիրներին մոտենալու կարողությունը: Համլետ Հայրապետյանը, ինչպես ասում են, աստվածատուր բժիշկ է, որն ունի յուրօրինակ, բայց ամուր հաստատված բժշկական անուն: Այս ամենը մեզ իրավունք է տալիս նրան վերաբերվելու որպես կատարելապես ձեւավորված բժշկի: Վիրահատությունից առաջ յուրաքանչյուր հիվանդի հոգին լի է մենակության, անտերունչության, թախծի զգացումներով, այն նույն թախծի, որը զգում են լոկ շատ միայնակ մարդիկ եւ վիրահատության պատրաստվողները: Նրանց թվում է, թե իրենք հավերժական գիշերվա երկրի բնակիչներ են, թե իրենք երբեք չեն տեսնի լուսաբացը: Նրանք սպասման ծանր վիճակում են, բայց այն հանկարծ անհետանում է, ինչպես միշտ: Կյանքի ծարավը չլսված տոկունություն է ծնում: Մարդը կարող է հաղթահարել անազատությունը, քաղցը, խեղումը, բարձրացնել իր ուժերից վեր ծանրություն, ուստի բժիշկը իր հիվանդների ապաքինմանը հավատում է իր ողջ էությամբ:

Հիվանդների տագնապները մնացել են հետեւում: Համլետ Հայրապետյանի հիվանդները շատ արագ են ապաքինվում: Բժշկի տարբերիչ գիծը ակտիվ աշխատանքն է հիվանդների հարազատների հետ, որոնք հավատում են իրեն: Նա խորհուրդ է տալիս, թե ինչպես կարելի է մերձավորին օգնել վերադառնալու ամենօրյա բնականոն կյանքի: Եթե դուք երբեւիցե ապաքինվել եք ծանր հիվանդությունից, ապա ձեզ ծանոթ է այն երանելի վիճակը, երբ քարանում ես աղոտ կանխազգացումներից եւ ժպտում առանց որեւէ պատճառի: Հրաժեշտ տալիս յուրաքանչյուր այցելու շատ ամուր սեղմում է բժշկի ձեռքը, դրանով իսկ արտահայտելով իր հոգու ջերմությունը եւ երախտագիտությունը: Հիվանդները գնահատում են Համլետ Հայրապետյանի ոչ միայն պրոֆեսիոնալիզմը, այլեւ մարդկային հատկանիշները: Կարծում եմ՝ ամբողջ բժշկական արվեստում հենց դա է կազմում դրական կողմը, հիվանդին վստահություն ներշնչելով, որ ինքը պետք է անպայման ապաքինվի: Այո, այսօր կան հիանալի եւ նրբագույն արդիական սարքեր, բայց ես կարծում եմ, որ վիրաբույժի ձեռքերն ու հոգին ավելի կարեւոր են:

Հոդվածիս վրա աշխատելիս նրա մասին գրելը ինձ հաճույք էր պատճառում, եւ ցանկություն կար սակավաթիվ բառերով վերարտադրելու անսովոր լայն հոգու տեր մարդու, գեղեցիկ ու ազատ տաղանդի եւ հազվագյուտ վարպետության տեր բժշկի կենդանի գծերը: Մասնագետները հավաստացնում են, որ դժվար է պատկերացնել ավելի լավ, հնարամիտ ու խորաթափանց բժիշկ: Նա միշտ գիտե, թե ինչ է ուզում եւ ինչի է ձգտում: Հոգու ինչ-որ առանձնահատուկ հատկանիշի պատճառով նա չի կարողանում մերժել որեւէ մեկի խնդրանքը: Եվ նրա մեջ այդ գիծը ծագում է ոչ թե անհատականության անկանոն հարստությունից, այլ սրտի ճշմարիտ բարությունից: Ինձ վաղուց անհանգստացնում էր սրտիս ցավը: Ես իմ մեջ գտնում էի ամեն տեսակ հիվանդություններ, վերհիշում իմ բոլոր, նույնիսկ ամենափոքր եւ վայրկենական հիվանդագին զգացողությունները: Ի վերջո ինձ ստիպեցի դիմել Համլետ Հայրապետյանին: Բժշկի ընդունարանում սպասում էին հսկայական թվով հիվանդներ. նույնիսկ նեղվածք էր: Ինձ զննելով եւ բուժում նշանակելով՝ նա հավաստիացրեց, որ վտանգավոր ոչինչ չկա, եւ ես թեթեւության ու հանգստության արտասովոր զգացումով վերադարձա տուն:

Նա ոգեւորում է եւ իրեն հավատալ է տալիս իր տաղանդի եւս մեկ կողմի շնորհիվ: Հայրապետյանը արվեստի, սպորտի, բնական գիտությունների, պատմության, գեղանկարչության մեջ եւ շատ այլ բաներում իր ծավալուն գիտելիքներով, երբեք որեւէ մեկին չի հոգնեցնում իր գիտական վիթխարի պաշարով, բայց սեփական կարծիքները միշտ արտահայտում է հակիրճ եւ ամենահամեստ ձեւով. «Եթե չեմ սխալվում...», «Որքան հիշում եմ...», «Ինչպես ինձ թվում է...»:

Ամեն օր լսում եւ կարդում ենք մինչեւ օրս անհայտ նոր միջոցների մասին, տեղեկանում, որ դեռ երեկ գիտության վերջին խոսք համարված մեթոդներն ու հնարքները այսօր արդեն դարձել են սովորական: Երբեմն հետաքրքրական է լինում լսել փորձով իմաստնացած բժշկի կարծիքը իր կոչման եւ գործունեության մասին: Համլետ Հայրապետյանն ասում է. «Բժշկությունն առաջ է գնում հսկայական քայլերով: Պարզապես անհնար է հետեւել նրա հաջողություններին: Բացի դրանից, ամեն մարդ նոր, ուրիշներից միանգամայն տարբեր օրգանիզմ է: Ուստի հարկավոր է միեւնույն հիվանդությունից մեկին բուժել այսպես, մյուսին՝ այնպես»:

Նրա ամբողջ կյանքն անցնում է որեւիցե հանրային ներկայացուցչությունից եւ ինքնագովազդումից դուրս: Ես դժվարությամբ նրա համաձայնությունն ստացա այս հոդվածի հրապարակման համար: Նա իր կյանքում շատ բան է տեսել, բայց ոչ մի անգամ չի կորցրել ինքնատիրապետումը, յուրացնելով միայն բարու եւ համբերության դասերը: Այդպես էլ ապրում է նա՝ բժշկի իսկական հպարտությամբ, օրինավորությամբ առլեցուն մարդը: Նրան վիճակվում է շատ աշխատել, եւ ամեն ինչ չէ, որ գոհացնում է իրեն: Այսօրվա կյանքում նրան շատ բաներ են տխրեցնում, բայց նա չի վհատվում, իրեն չի կորցնում, իր մեջ ուժ է գտնում հանգիստ հաղթահարելու դժվարությունները: Անձնական հարաբերություններում երբեք որեւէ մեկի առջեւ գլուխ չի խոնարհում, ոչ մեկից օգնություն չի խնդրում, ոչ մի անգամ զանց չի առնում այն, ինչը համարում է ազնիվ եւ արդար:

Ուժեղ կամք՝ ահա՛ նրա անհատականության գլխավոր հատկանիշներից մեկը: Այդ կամքը դրսեւորվում է ամեն ինչում, նրան տալիս է վստահություն, անդրադառնում նրա բոլոր արարքների ու որոշումների վրա: Նա կասկածին տեղի տվողներից չէ, իսկ որ գլխավորն է՝ հաստատ հավատում է վիրահատության հաջող ավարտին: Համլետ Հայրապետյանի բնավորության ուժը վերագրում են ինչին ասես. փորձին, խոր մարդկայնությանը, իմաստնությանն ու բարությանը, պայծառ հավատին եւ բազմաթիվ այլ գործոնների: Այստեղ կարելի է նշել լոկ այն, որ հաճախ նրա լույսից կուրանալով, նրա զգացմունքներից լիցքավորվելով՝ մենք քիչ ենք խորհում, որ այդ ամենը բխում է ոչ միայն ի վերուստ շնորհված մեծ սրտից, այլեւ մասնագիտության ու կյանքի բոլոր գաղտնիքներին ու բարդություններին տիրապետելու արդյունք է: Նա սրտաբանների միջազգային մի շարք ընկերակցությունների անդամ է:

Վերջին հաշվով ո՞վ է բժիշկը, ուսուցիչը, գեղանկարիչը, գրողը, կոմպոզիտորը, ճարտարապետը: Դա նախ եւ առաջ հոգեվիճակ է:

Ես կարծում եմ՝ բժիշկն իրավունք չունի օրերն ապրել այնպես, ասես դրանք իրարից ոչնչով չեն տարբերվում: Ընդհակառակը, նրա համար բոլոր օրերը տարբեր են, ամեն մեկն անկրկնելի է: Այդ մասնագիտության մեջ կրկնություններն ու կանգառները անթույլատրելի են:

Անվեհեր զինվորը իր պահակակետը թողնում է լոկ այն ժամանակ, երբ նրա ձեռքերից ինքնաբերաբար ընկնում է դրոշը, եւ աչքերը ծածկվում են սառը մշուշով: Խոնարհվենք հերոսականության այդ կերպարի առջեւ: Գլխարկները հանենք եւ գլուխ խոնարհենք հարյուրավոր կյանքեր փրկող սրտաբանի ամենօրյա անձնվիրության առջեւ: Ամբողջ երախտապարտ հոգով նրան մաղթում եմ մասնագիտական հաղթանակներ, շատ տարիների առողջ ու երջանիկ կյանք: Եվ կուզենայի, որ այդ Մարդու մեջ ապրող ու վառվող վեհի, հզորի, բարու հուրը երբեք չմարի: Թող նա, հոգուտ եւ հուրախություն մարդկանց շքեղ պարտեզ կերտած բարի տանտիրոջ նման, երկա՜ր-երկա՜ր մնա իր դիրքերում:

Ռուս. թարգմ. Պ. Ք.

# Ո՞ւմ դեմ եւ ինչպե՞ս կկռվի Թրամփը Մերձավոր Արեւելքում

## *Պենտագոնի հակաահաբեկչական պայքարի ծրագիրը*

Ամերիկյան մամուլում հայտնված հաղորդումների համաձայն, պաշտպանության նախարար Ջիմ Մեթիսը Սպիտակ տանը ներկայացրել է Իրաքում եւ Սիրիայում «Իսլամական պետության» դեմ պայքարի նախնական ծրագիր: Դրանով իսկ Պենտագոնը կատարել է նախագահ Թրամփի որոշումը, ով պաշտոնակալությունից անմիջապես հետո հրամայել էր 30 օրվա ընթացքում այդ ուղղությամբ մշակել կոնկրետ քայլերի ամբողջություն: Ներկայացված փաստաթղթի մանրամասնությունները եւ բուն գաղափարական ուղղվածությունը դեռ հայտնի չեն, բայց Պենտագոնի վերլուծաբանները այդքան կարճ ժամանակամիջոցում դժվար թե կարողանային մշակել «նոր մերձավորարեւելյան իրականության» նախագիծ:

Շտաբների պետերի միացյալ հանձնախմբի ղեկավար, գեներալ Ջոզեֆ Դանֆորդի հայտարարության համաձայն, ընդհանուր առմամբ ռազմավարությունը ներառում է Մերձավոր Արեւելքում եւ ողջ աշխարհում «Ալ-Ղաիդայի» եւ մյուս ծայրահեղական խմբավորումների դեմ պայքարի ծրագիր, իսկ կոնկրետ պլանը, ռազմական միջոցառումներից բացի, ներառում է «ռազմաքաղաքական բնույթի» գործողություններ: Նշված է նաեւ «Իսլամական պետությանը» եւ դրա հետ կապված խմբավորումների «արագորեն հաղթելու» նպատակով կոալիցիայի մեջ նոր գործընկերներ (այդ թվում Ռուսաստանին) ներգրավելու մտադրությունը: Այս ուղղությամբ ամերիկյան ԶԼՄ-ներում արդեն թույլ են տրվել որոշ տեղեկատվական «արտահոսքեր»:



Այսպես, The Wall Street Journal թերթը հաղորդել է, որ «Սպիտակ տունը Իսրայելի եւ արաբական չորս երկրի` Սաուդյան Արաբիայի, ԱՄԷ-ի, Եգիպտոսի եւ Հորդանանի հետ բանակցում է նոր մերձավորարեւելյան դաշինքի ստեղծման նպատակով, որը կկարողանար փոխել տարածաշրջանային ուժերի զուգակշռությունը»: Սպիտակ տունը հասկացնում է, որ հավանական դաշինքը լինելու է «միանգամայն նոր, անցյալում չտեսնված» ինչ-որ բան եւ «ընդգրկելու է շատ երկրներ ու հսկայական տարածք»: Սակայն հարկ է նշել, որ դրանում սկզբունքորեն նոր ոչինչ չկա, քանի որ նախագահ Բարաք Օբաման նույնպես փորձում էր Մերձավոր Արեւելքում կազմել զանազան դաշինքներ, բանակցում էր Ռուսաստանի հետ, բայց նա Իրանին աստիճանաբար դուրս էր բերում հնարավոր առճակատման գոտուց, Թրամփը հակառակն է անում: Ավելին, օրերս նա հայտարարեց հետեւյալը. «Մենք Մերձավոր Արեւելքում պատերազմեցինք 17 տարի... Մենք Մերձավոր Արեւելքում ծախսեցինք 6 տրիլիոն դոլար: Սա պարզապես անթույլատրելի է. չէ՞ որ մենք ոչնչի չհասանք»:

Նախ եւ առաջ, դա այնքան էլ ճիշտ չէ: Երկրորդ, դա հավակնոտ պնդում է, թե, ի տարբերություն իր նախորդների, Թրամփը գիտե այդ տարածաշրջանում արվելիքը եւ տեսնում է ինչ-որ կոնկրետ նպատակ (ԻՊ ջախջախումից զատ): Բայց ինչպիսի՞ նպատակ:

2001 թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչություններից հետո ԱՄՆ-ը եւ իր դաշնակիցները ներխուժեցին Աֆղանստան: Արդյունքը. այդ երկիրն առաջվա պես ներքաղաքական եւ աշխարհաքաղաքական չափազանց բարդ վիճակում է: «Ալ-Ղաիդայի» առաջնորդ Ուսամա բեն Լադենը սպանվեց, բայց խմբավորումը մնաց եւ պահպանեց դիրքերը ամբողջ Մերձավոր Արեւելքում: 2016 թ. հուլիսին նախագահ Օբաման ստիպված եղավ Աֆղաստանում 8,5 հազար զինվոր թողնելու որոշում ընդունել, որպեսզի նրանք օգնեն տեղացի ուժայիններին: 2003 թ. ԱՄՆ-ը ներխուժեց Իրաք եւ տապալեց Սադդամ Հուսեյնի վարչակարգը: 2011 թ. ամերիկյան զորքերը դուրս բերվեցին Իրաքից: Արդյունքը. Բաղդադում ամրապնդվեց շիաների իշխանությունը եւ ըստ այդմ ուժեղացավ Իրանի ազդեցությունը, Իրաքի հյուսիսում հստակորեն ուրվագծվեց քրդական գործոնը, ի հայտ եկավ «Իսլամական պետությունը», Հյուսիսային Աֆրիկայում եւ Մերձավոր Արեւելքում սկսեց ծավալվել այսպես կոչված «Արաբական գարնան» երեւույթը: Հենց այդ երեւույթի միջոցով Թուրքիան սկսեց ներքաշվել մերձավորարեւելյան գործընթացների մեջ:

Սիրիայի ճգնաժամը ի հայտ բերեց հետեւյալ կարեւոր գործոնները. «Իսլամական պետությունը» ստեղծեց իրաքա-սիրիական ընդհանուր ռազմաճակատ, ի չիք դարձնելով այդ երկու երկրների սահմանը, ուրվագծվեց Իրանի ակտիվ աջակցությունը Դամասկոսին, բեմահարթակում առավել նկատելի դարձան Սիրիայի ու Թուրքիայի քրդերը, իսկ հետո Սիրիայում հայտնվեցին ռուսական օդատիեզերական ուժեր: «Արաբական գարնան» ծավալման կապակցությամբ «Նյու Յորք թայմս» թերթը մի առիթով գրեց. «Օսմանյան կայսրության ավերակների վրա` Լիբիայից մինչեւ Միջագետք, սրվել է պայքարը հանուն գաղափարախոսական, տնտեսական ու ռազմական տիրապետության, տարածաշրջանը սուզվում է քաոսի եւ անիշխանության մեջ»: Հստակություն չկա Թուրքիայի հարցում, քանի որ ԱՄՆ-ը օգնել Սիրիայի քրդերին, եւ մի շարք նշանների հիման վրա կարելի է խոսել այդ ուղղությամբ լավ կշռադատված գործողություններից: Անշուշտ, Թուրքիան մտադիր չէ թույլ տալ քրդերի ազդեցության ուժեղացում եւ ակնկալում է Ռուսաստանի աջակցությունը, որը իր հերթին կարծում է, թե Թուրքիան կարող է օժանդակել Սիրիայի կայունացմանը:

Այսօր պատմաբանները եւ փորձագետներից շատերը փորձում են գտնել հետեւյալ հարցերի պատասխանները: Արդյոք դա ԱՄՆ-ի եւ իր արեւմտյան դաշնակիցների ռազմավարական ծրագի՞րն էր, թե՞ խոսքը Սպիտակ տան աշխարհաքաղաքական ինչ-որ իմպրովիզացիայի մասին է: Ինչո՞ւ նախագահ Թրամփը Մերձավոր Արեւելքում այժմ սկսեց քաղաքականության կտրուկ շրջադարձ կատարել Իսրայելի կողմը, եւ տարածաշրջանում դա ԱՄՆ-ի եւ Իսրայելի երկու աշխարհաքաղաքական նախագծերի դիմակայության հետեւանքը չէ՞ արդյոք: Տվյալ շրջադարձով Թրամփը փոխում է ուժերի դասավորությունը, վերակառուցում ռազմավարությունը եւ գործընկերներ փնտրում առաջին հերթին ընդդեմ Թեհրանի: «Ռեգնում» գործակալության նախնական հետեւությունն այն է, որ տարածաշրջանում «Իսլամական պետությանը» գլխավոր թշնամի հայտարարելով` Վաշինգտոնը մտադիր է նրան գործիք դարձնել ուրիշ, առայժմ չնշված նպատակների հասնելու համար: Պատահական չէ, որ Պարսից ծոցի երկրները ԱՄՆ-ի օրինակին հետեւելով Իրանը համարում են «ահաբեկչության գլխավոր հովանավոր»: Այս կապակցությամբ կարելի է ենթադրել, որ Պենտագոնի ներկայացրած հակաահաբեկչական պայքարի նախնական ծրագրում նշված լինեն կոալիցիայի մեջ Ռուսաստանի ներգրավման պայմանները` նրան Իրանից հեռացնելու նպատակով: Պատահական չէ, որ իսրայելական «Մոսսադի» նախկին ղեկավար Էֆրայիմ Հալեւին «Իրանի հարցով» մտահոգված Իսրայելի իշխանություններին կոչ է արել կարգավորել հարաբերությունները Ռուսաստանի հետ:

Առայժմ ակնհայտ է հետեւյալը: Պենտագոնի ծրագիրը ուրվագծային, մակերեսային բնույթ է կրում եւ սրբագրվելու է տարածաշրջանում իրադարձությունների հետագա զարգացման համեմատ: Շատ բան կախված կլինի նրանից, թե Ռուսաստանը, Թուրքիան եւ Իրանը կկարողանա՞ն արդյոք պահպանել իրենց դաշինքը եւ փոխշահավետ ու խելամիտ որոշումներով դիմակայել հնարավոր նոր ճգնաժամերին, որոնց բնույթն առայժմ ակնհայտ չէ: Առայժմ Մերձավոր Արեւելքում պատմությունը գործում է դրամատիկ սցենարով:

Պ. Ք.

---

ՍԱԳՕ ԱՐԵԱՆ

# Անքարան «Թրքական Հալէ՞պ» պիտի հիմնէ

**Սուրիոյ պատերազմին հետեւանքով Թուրքիա «հաստատուած» շուրջ 2 միլիոն փախստականներու հարցը սկսած է լուրջ բեռ դառնալ Անքարայի համար:**

**Անցնող օրերուն արաբական մէկէ աւելի լրատուական ծառայութիւններ լուր տարածեցին այն մասին, թէ Թուրքիոյ իշխանութիւնները սկսած են գործի դնել Հալէպի յատկապէս հիւսիսային աւաններուն մէջ բնակարանային համալիրներ կառուցելու երկու հիմնական ծրագիրներ:**

**Մինչ առաջին ծրագրին հիմամբ «Ալ Ռաիի» (Հալէպէն 65 քլմ. հեռաւորութեան վրայ գտնուող) շրջանին մէջ «պատրաստ են» 40 հազար բնակարաններ, անդին Ալ Պապ քաղաքին մէջ կառուցման ընթացքի մէջ են 11 հազար բնակարաններ:**

**Ըստ «Ալ Ժասիտ» կայանին, նոյն շրջաններուն մէջ օգտագործման պիտի յանձնուին արդիական հիւանդանոցներ եւ վարժարաններ:**



**Նոյն առումով Անքարան «ապահովական զննում»ներ կը կատարէ այն փախստականներուն մասին, որոնք պատրաստ են Թուրքիայէն հեռանալ եւ ապաստանիլ այդ նորաստեղծ աւաններուն մէջ:**

**Տակաւին, բացայայտօրէն կ՚ըսուի, որ Սուրիոյ իշխանութիւններուն ենթակայ չեղող այդ շրջանները պիտի կառավարուին Թուրքիոյ Քիլիս քաղաքի վարչական մարմիններու «հովանիով»:**

**Միջազգային բոլոր նորմերը խախտող այս վարքը նորութիւն չէ Թուրքիոյ պարագային: Դէպքի մասին կարճ վերլուծութիւն մը գրելով սուրիացի քաղաքագէտ Մոհամմաս Քամալ ալ Ջաֆի յայտնած է, թէ Անքարայի համար «ամէնէն սիրելի» շրջանը Հալէպն է ու անոր շրջակայ տարածքները: Ալ Ջաֆի պատմական զուգահեռ մը գծելով կը յայտնէ, որ Անքարա նոյն միջոցներով եւ դանդաղ ու երկարատեւ «ներթափանցումով»` վերաբնակեցումով յաջողած էր իրեն կցել մինչ այդ Սուրիոյ «օրգանական» մասնիկը համարուող` Իսքենտերունը, Ալեքսանտրէթը, որ Թուրքիոյ «կը տրուէր» 1939-ին Ֆրանսայի հովանիով կատարուած հանրաքուէի մը հիմամբ (ուր թրքական կողմը գործի կը դնէր բացայայտ կեղծումներ):**

**Այդ ժամանակաշրջանին էր նաեւ, որ հայութեան կարեւոր հատուած մը ստիպուած եղած էր հեռանալ այսօր արդէն Հաթայ կոչուած մեզի յայտնի Ալեքսանտրէթէն:**

**Այդ օրերուն «Իսլամական պետութեան» խաղաքարտը չկար: Խաղացողներն ուրիշ էին, բայց մշտական ներկայութիւն եղողը Թուրքիոյ «հանրապետութեան» վարչակարգն էր:**

**Վերջին ամիսներուն Սուրիոյ շուրջ ընթացող բանակցութիւնները դանդաղ ու բաւական ձանձրալի ռիթմով կը շարունակուին:**

**Անքարան ամէն գնով կը փորձէ պահպանել «իրեն նախատեսուած» շրջանները եւ Օսմանեան կայսրութեան «հիւանդ մարդ»ը յիշեցնող քայլերով ապահովել իր գարշապարը սուրիական սահմանագծի երկայնքով տեղ-տեղ ինքնահաստատման փորձ կատարող քրտական ջոկատներէն:**

**Հակառակ իր «ախորժակներուն», Էրտողանի վարչակազմը, որ օրերս սուսերամարտի ելած է Պերլինի դէմ, կը գոհանայ հերթական սպառնալիքներով ու կը սպասէ Մոսկուա- Ուաշինկթընէն վերջին «կանաչ լոյս»ին:**

**Թուրք մէկէ աւելի վերլուծաբաններ կը գրեն, որ իրենց բանակը նախկին «փայլ»ը չունի ու ատոր համար է նաեւ, որ «շաբաթներու հարց» հանդիսացող Ալ Պապը «Իսլամական պետութեան» ճիրաններէն «ազատագրելու» ճակատամարտը տեւեց հինգ ամիս:**

**Այսօր Անքարան կը խօսի քրտաբնակ Մընպէջ քաղաքի «ազատագրման» մասին: Ու դարձեալ գործի կը դնէ սպառնալիքի լեզուն:**

**Այս բոլորով մէկտեղ ուժի մէջ է բնակեցման նոր ծրագիր մը, որուն շնորհիւ Անքարան մտադիր է հիմնել` «թուրքմենական աւաններ»:**

**Մտահոգիչ է տեղի ունեցածը, մանաւանդ երբ տարբեր պատասխանատու բեմերէ լսելի կը դառնայ Հալէպը վերականգնելու ծրագիրներու մը մասին:**

**Ներհայկական առումով ալ բաւական ակնառու է, որ մինչեւ այս պահը Հալէպը ոտքի հանելու լուրջ եւ պատրաստի ծրագիրներ չկան:**

**Եթէ Հալէպը պիտի վերադառնայ (բան մը որ բացառուած է) իր երբեմնի դերին, ապա հայութիւնը պարտաւոր է կրկին մտածել թրքական գործօնին մասին:**

**Գործօն մը, որ այսօր սկսած է ովասիսներ «աճեցնել» հայկական Հալէպէն ընդամէնը տասնեակ քիլոմէթր հեռաւորութեան վրայ գտնուող եւ բաւականին կասկածելի տարածքներու մէջ:**

AZG NEW SHABAT 1.QXD 08/03/2017 21:53 Page 12



# ՎիվաՍել-ՄՏՍ. 2005-2017թթ. ավելի քան 28 միլիարդ դրամի սոցիալական ներդրում` ի նպաստ Հայաստանի զարգացման

Գործունեության ավելի քան տասնմեկ տարվա ընթացքում, կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ռազմավարության շրջանակներում, ՎիվաՍել-ՄՏՍ-ը շուրջ 28,015,900,000 (ավելի քան 28 միլիարդ) դրամ է հատկացրել Հայաստանում սոցիալական ներդրումներ իրականացնելու նպատակով` տարբեր ոլորտների բարելավման եւ կայուն զարգացման ուղղությամբ: Դրանից շուրջ 1,338,400,000 դրամը (ավելի քան 1.3 միլիարդ դրամ) նախատեսված է 2017թ.-ի ընթացքում աշխատանքներ իրականացնելու համար: Միջին տարեկան կտրվածքով` սոցիալական ներդրումների տարեկան գումարային ծավալը կազմում է 2,234,600,000 դրամ (ավելի քան 2,2 միլիարդ): Ծրագրերի շրջանակներում` տարեկան իրականացվել է հանրային շուրջ 82 միջոցառում:



Սոցիալական ներդրումների համալիր ծրագիրը հիմնված է երկարաժամկետ եւ համակողմանի ռազմավարության վրա: Ծրագրային առանձին ուղղություններ ընտրվել են համապատասխան ոլորտների կարիքների գնահատումից, ինչպես նաեւ երկարաժամկետ կտրվածքով առկա խնդիրներին արձագանքելու հրատապությունից ու դրանց կարեւորությունից ելնելով: Տարբեր ոլորտներ ներառող ծրագրերն իրականացվում են հետեւողականորեն` նպատակ ունենալով հիմքեր ստեղծել հետագայում այդ ոլորտների շարունակական զարգացման համար:

Տարիների ընթացքում, հասարակական կյանքի տարբեր ոլորտներում ՎիվաՍել-ՄՏՍ-ի սոցիալական ներդրումները ներառել են հետեւյալ հիմնական ծրագրերը.

Բնակարանի ապահովում` ներառյալ Գյումրիում ու Վանաձորում երկրաշարժից տուժած կարիքավոր 40 ընտանիքի բնակարանների տրամադրում, ինչպես նաեւ «Ֆուլեր» տնաշինական ծրագրի շրջանակներում` 58 գյուղական, այդ թվում` սահմանամերձ համայնքների 200 ընտանիքի համար կիսակառույց տների շինարարության ավարտ եւ վերանորոգման աշխատանքներ:

Ենթակառուցվածքի զարգացման 191 նախագիծ` Հայաստանի 10 մարզի 50 գյուղական համայնքներում` ներառյալ գազատարների, ոռոգման եւ խմելու ջրի համակարգերի ներդրում, այլընտրանքային էներգիայի ենթակառուցվածքի ստեղծում (արտաքին LED լուսավորության եւ ջեռուցման համակարգեր): Ինչպես նաեւ` մարզային կրթական հաստատությունների եւ մշակութային օջախների վերանորոգում եւ պաշտպանիչ պատի կառուցում` սահմանամերձ գյուղերում:

Շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված ծրագրեր, որոնց շրջանակներում բնապահպանական գիտելիքներով վերազինվել է ավելի քան 2000 երիտասարդ, ստեղծվել է շուրջ 1000 աշխատատեղ, «Արեւորդի» էկոակումբների սաների կողմից նկարահանվել է ավելի քան 40 փաստավավերագրական ֆիլմ` բնապահպանական թեմաներով: Կենսաբազմազանության պահպանմանն ուղղված ծրագրերի շրջանակներում` Կովկասյան կենսաբազմազանության պատաստարանի շուրջ 8000 հա տարածքի պահպանման նպատակով, Կովկասյան կենսաբազմազանության պատաստարանի էկոկրթական կենտրոնին տրամադրվել են մշտադիտարկման ժամանակակից սարքավորումներ եւ կառուցվել է բազային նոր կայան` կենտրոնի հարեւանությամբ:

Առողջապահական ծրագրերի շրջանակներում բժշկական ավելի քան 30 տեսակի սարքավորում է հատկացվել մայրաքաղաքի եւ ավելի քան 31 համայնքի բուժհաստատություններին` ներառյալ նորածնային խնամքի բուժսարքավորումների տրամադրում ծննդատներին: Մասնագիտական աջակցություն է ցուցաբերվել հատուկ կարիքներով ավելի քան 400 երեխայի: Կազմակերպվում են հիպոթերապիայի կուրսեր` խնդիրներ ունեցող շուրջ 100 երեխայի համար:

Մշակույթի եւ ազգային ինքնության պահպանման ոլորտներին աջակցելու շրջանակներում կազմակերպվել է ավելի քան 2000 համերգ եւ մշակութային տարբեր միջոցառում` մայրաքաղաքում եւ մարզերում:

Աջակցություն տեղեկատվական եւ հեռահաղորդակցության տեխնոլոգիաների զարգացման ոլորտում, ներառյալ` ՏՏ ոլորտում համաշխարհային ներդրման համար ՀՀ Նախագահի մրցանակը, Հայաստանում միկրոէլեկտրոնիկայի ամենամյա միջազգային օլիմպիադաների անցկացումն ու ֆաբլաբերի ստեղծումը:

ՎիվաՍել-ՄՏՍ-ի, ՀՀ կրթության եւ գիտության նախարարության, «Սինոփսիս Արմենիա» եւ «Յունիֆոմփ» ընկերությունների միջեւ ստորագրված փոխըմբռնման հուշագրի շրջանակներում իրականացվում է ՏՀՏ փորձարարական ուսումնական ծրագիր, որի նպատակն է ապահովել «Միկրոէլեկտրոնիկա», «Հեռահաղորդակցության հիմունքներ», «Տեղեկատվական տեխնոլոգիաներ» մասնագիտական առարկաների ներդրումն ավագ դպրոցներում: ՎիվաՍել-ՄՏՍ-ի ֆինանսավորմամբ իրականացվում են «Միկրոէլեկտրոնիկա», «Հեռահաղորդակցության հիմունքներ», «Տեղեկատվական տեխնոլոգիաներ» առարկաների լաբորատորիաների ստեղծման աշխատանքները:

Հատուկ կարիքներ ունեցող, ծնողազուրկ եւ սոցիալապես անապահով 1200 ուսանողի ուսման վարձի հատուցում: Wi-Fi անկյունների եւ լաբորատորիաների ստեղծում 30 բուհում եւ տարբեր մարզերի 16 դպրոցում:

Աջակցություն սպորտի ոլորտին, ներառյալ` շախմատի, ֆուտբոլի, նետաձգության զարգացմանը եւ այլն:

«Ավելի քան 11 տարի անընդմեջ, ՎիվաՍել-ՄՏՍ-ը հավատարմորեն առաջնորդվել է իր արժեհամակարգի առանցքը հանդիսացող` կորպորատիվ պատասխանատվության օրակարգով: Ընդ որում, կայուն զարգացմանը միտված` սոցիալական լայնածավալ ներդրումներն այդ օրակարգի ընդամենը մեկ բաղադրիչն են: Ոչ պակաս կարեւոր է թե՛ կազմակերպության ներսում, եւ թե՛ սոցիալական լայնածավալ ներդրումների միջոցով կորպորատիվ պատասխանատվության ինստիտուտի ներդրումն ու ամրապնդումը Հայաստանում` հետեւողական եւ համակարգված աշխատանքների միջոցով»,- ասել է **Ռալֆ Յիրիկյանը**:

Տարբեր նախագծերում ՎիվաՍել-ՄՏՍ-ի աշխատակիցների ներգրավվածությունն էապես նպաստում է երկրում կամավորականության մշակույթի խրախուսմանը: Այս մոդելը գործունեության առաջին իսկ տարիներից դրվել է ընկերության գործունեության հիմքում:

ՎիվաՍել-ՄՏՍ-ը հեռահաղորդակցության միակ օպերատորն է Հայաստանում եւ առաջին ընկերությունը ԱՊՀ տարածաշրջանում, որն իրականացրել է սոցիալական պատասխանատվության ISO 26000 ուղեցույցների հանձնարարականները:

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**Ռամկավար Ազատական կուսակցության 2016 թվականի ֆինանսական հաշվետվություն**

| | |
|---|---|
| 1. Մնացորդը հաշվետու տարվա հունվարի 1-ի դրությամբ | 3 230.00 |
| 2. Մուտքի վճարներ (վարձակալություն) | 6 360 000.00 |
| 3. Անդամակցության վճարներ | 255 000.00 |
| Ընդամենը մուտք | 6 615 000.00 |
| 1. Ֆիզիկական անձանց տրված վճարներ (աշխատավարձ, ծառայությունների մատուցման վճարներ) | 550 680.00 |
| 2. Գույքի վարձակալության վճար | 1 090 000.00 |
| 3. Կոմունալ վճարումներ | |
| -գազ | 379 100.00 |
| -էլ.էներգիա | 219 250.00 |
| -ինտերնետ | 70 000.00 |
| 4. Հարկեր, տուրքեր | |
| -եկամտային հարկ | 3 991 320.00 |
| -սոց վճարներ | 39 000.00 |
| -գույքահարկ | 66 150.00 |
| 5. Գույքի ձեռք բերման համար կատարված ծախսեր | 200 000.00 |
| Ընդամենը ծախս | 6 605 500.00 |
| Մնացորդը 31.12.2016 դրությամբ | 12 730.00 |

*ՌԱԿ ատենապետ Հակոբ Ավետիքյան*

# «Զարմանազան»




**Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութիւնը արեւմտահայերէնի զարգացման իր ինգամեայ ծրագիրի ծիրին մէջ «ԶԱՐՄԱՆԱԶԱՆ» անունով կրթական աշխատանոցի մը կը ձեռնարկէ, որ նոյն վայրին մէջ պիտի համախմբէ իրար ամբողջացնող երկու ճիւղեր.**

**❖ 10էն 15 տարեկան մանուկներուն ուղղուած ամառնային ճամբար մը (Լիոնի «Հազար ու մէկ աշխարհ» ընկերակցութեան հետ գործակցութեամբ), զուարճալի ու ստեղծագործական միջավայրի մը մէջ, արեւմտահայերէնի գործածութիւնը խրախուսելու նպատակով.**

**❖ Սփիւռքի ներկայ եւ ապագայ արեւմտահայերէնի ուսուցիչներուն ուղղուած արհեստագիտական վարժընթաց մը (Ֆրանսայի Արեւելեան լեզուներու եւ քաղաքակրթութիւններու ազգային հիմնարկին հետ գործակցութեամբ), որ պիտի վաւերացուի համալսարանական վկայականով մը:**

**Ամառնային ճամբարին մասնակից մանուկներն ու պատանիները 25 օր տեւողութեամբ, փորձառու 15 ուղեկիցներու հետ, ներշնչող մթնոլորտի մը մէջ պիտի ապրին: Ամբողջովին թաթխուած արեւմտահայերէն հնչող միջավայրի մը մէջ, պիտի ստեղծագործեն, պիտի յայտնաբերեն, պիտի սորվին եւ պիտի զուարճանան զանազան աշխատանոցներու միջոցով (երաժշտութիւն, պար, թատրոն, գեղարուեստ) եւ մարզախաղերով: Ասոնց ընդմէջէն` լեզուն վերջապէս պիտի դառնայ հաղորդակցութեան եւ ստեղծագործութեան բնական միջոց մը:**

**«Զարմանազան» ճամբարը ներգործութիւններու տարածք մը պիտի մատուցէ, ուր բոլոր մասնակիցները իրարմէ սորվելու եւ իրարու հետ ընկերային կապեր հաստատելու առիթը պիտի ունենան, հարստացնող եւ եզակի փորձառութիւն մը ապրելով:**

**Ճամբարը բաց է սփիւռքահայ բոլոր մանուկներուն եւ պատանիներուն համար: Նախատեսուած է 40 երախայի համար: Հայերէնի իմացում չի պահանջուիր:**

**Ուսուցիչներու պատրաստութեան ծրագիրը 15 ուսուցիչ պիտի ընդունի, որոնք խտացեալ ուսումնակրթական ծրագիրի մը պիտի հետեւին: Ծրագիրը կ'ընդգրկէ գործնական վարժընթաց մը եւ մասնագիտական դասախօսութիւններ, նորագոյն մանկավարժական մօտեցումներու եւ միջոցներու կիրարկումով:**

**Ճամբարին վայրն է` Ֆրանսայի Լա Պուրպուլ գիւղաքաղաքը:**

**Արձանագրութեան դիմումները կատարել նախքան 25 մարտ 2017-ը ժամը 23:00ին` Կրինուիչի ժամով:**

**Յաւելեալ տեղեկութիւններ ստանալու համար այցելեցէք` www.zarmanazan.com**

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԵ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը` «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Weekly
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 0010

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ` 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող` «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը` 04 Ա N 047261, տրուած` 25.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 9.3.2017, գինը` 200 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում` Արշակունեաց 2: